ԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱՆ Է

Թիֆլիս	Գեպառտամենտ	Առաքահանձնում
Տարեկան 6 ր.	Տարեկան 7 ր.	Տարեկան 32 ֆր.
1/2 տարին 3 ր.	1/2 տարին 3 ր. 50 կ.	1/2 տարին 16 ֆր.
Ամսական 60 կ.	Ամսական 70 կ.	Ամսական 3 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վճարն է առաջին երեսում իւրաքանչիւր տողին 6 կոպեկ, իսկ վերջին երեսում 3 կոպեկ։
Մեծ և տեղական յայտարարութիւններ առանձին պայմանով։

Ընդունուում են բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին ցերեկ. 12—2 ժ.

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Գրեչկինսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Аликъ“, Фрейлинская, № 6. Կամ Rédaction „Alik“ Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 37 ՀԱՐԹ 10 ՅՈՒՆԻՍ 1906 թ. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1906 թ. ՀԱՐԹ 10 ՅՈՒՆԻՍ № 37

„ԱԼԻՔ“-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՔ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Ցուսիկի մէկից մինչև տարեայ վերջը՝ Թիֆլիսում—3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս—4 ր. 10 կ. Արտասահման—19 ֆրանկ։

ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՄԵՆ ԱՄՍԻ 1-ԻՑ

Դիմել՝ Тифлисъ, редакція «Аликъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Alik». Ընդառաջումները գտնուում է Թիֆլիսում, Գրեչկինսկայա փողոց № 6.

ԲԱԿՈՒԻ ՆԱՒԹԱՐԴԱՒԱՆԱԲԱՐԿԱՆ

հանգստարարի խորհուրդը

որոնում է մի ՓՈՐՁԱՒՈՐ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ խարտրի բոլոր նաւթական ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ եւ ՀԱՄՈՒԱԿՈՐՆԵՐԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. Ուսումնարանները՝ միջնակարգ (7) և երկրակարգ (1) են, հանքային և գործարանական շրջանների բանւոր դասակարգի երկու տեսակ երեխաների համար խառն։ Ուսումնարանների կառավարիչը ուսումնարանական խորհրդի հետ միասին է լինելու։ Ուսումնարաններին կից կան երեկոյեան կուրսեր՝ հասակաւորների համար։ Վարձատրութիւնը 3000 րուբլի և 600 րուբլի կազբի փոյ։ Ցիշած տեղը բանելու ցանկութեան մասին յայտարարութիւնները, ամենրամայն curriculum vitae-ով խնդրւում է ուղարկել ոչ ուշ՝ օգոստոսի 1-ից Баку, Контора Совѣта Съѣзда Нефтепромышленниковъ.

3 3—2

ԳԵՍՏԻՏՕՐՍԿ

ԲՀ. Ք. ԳԱՆԶՈՒՄՏԱՆ

ընդունում է ներքին Բուլվարում «Փեստրոբուրգ» հիւանդանոցում Սիմֆիլիս, մսի, Ջրային ներքին հիւանդութիւններով։

255 11—4

Ազգապարան-Հրատարակչական ընկ. վարչութիւնը յայտնում է, որ կիրակի՝ յունիսի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃԻՄ նշանակած է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ուր կայանում է Ազգ. Հրատ. ընկ. փակումը և

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

բացումը.

Զբաղմանն առարկաներն են.

Վարչութեան զեկուցումը Ազգ. Հրատ. ընկ. գործի և դրամագլխի մասին, որ անցնելու են Հայոց Ազգապարան ընկերութեան Տպարանը և պատասխ., ինչպես և բոլոր պաշտօնեայ անձերի ընտրութիւնը։

Նախագահ՝ Ա. Մ֊ելիք֊Ազարեան

281 2—1

Թիֆլիս, 9 յունիսի

ՔԱՀԱՆ խալիֆանութիւնը իր կոչման բարձրութեան վրայ է։ Նա ունի կառավարչագործած օրգաններ, ունի պրօվօկատօրական անասլոց հմտութիւն նա յաճախ գերազանցում է պաշտօնական խալիֆանութեանը՝ իր գիւտնականաց մեքենայութիւններով, իր մշակած կուի ձեւերով։

Ադէնների ակզնաւորութիւնից է վեր կովկասեան շէյխ խալիֆանութեան պատգաւոններն ունէին իրենց առջև պարզ ու որոշ ռազմական նպատակ։

— Նախայարձակ լինել ամեն տեղ, անակնկալի բերել հայ ազգաբնակութիւնը և անխնայ ջարդել, աւերել, թալանել։

— Գիւղել միաժամանակ հայերի դէմ «սխալների» առաջ ազգաբնակութիւնը Անդրկովկասում ու Տաճկաստանում։

— Գիւղել գրա հետ և Պարսկաստանի շէյխ ժողովրդին, յատուկ միսիօնար-գործակալների, խալիֆայի մամուլի ու հապարատը նեղուց ինսինուացիաների ճանապարհով. լարել պարսիկ կառավարութիւնն ու ազգաբնակութիւնը մի բուռն պարսկահպանդութեան դէմ, և մէկ հատածով ջնջել ամբողջ «գեաւռլար» տարրը շիա-մահմեդական աշխարհից...

Այս բոլոր դէպքերը, այս բոլոր չարագործ մեքենայութիւնները եղել են, անշուշտ, խալիֆայի բէկերի ու իսանլիզենցիայի շրջանակներում. եղել են և կան, և մեր անդրոյ, որճող ֆրապիօրները միայն կարող են մեզմել, վարագուրել նրանց, կամ, լաւագոյն դէպքում լիշել խալիֆայական սև գաբերի շարքում նաև հայկական պրօվօկացիան։

Պարսկաստանի իշխանութիւններին զբաղեցրել՝ Թուրքական état-major-ի ռազմական նախագծի ամենակարևոր կէտերից մէկն է, ամենասպառվող և ամենից աւելի զիւտ իրագործելու։ Տաճկաստանում հայկական կոտրածների մէջազգին պետութիւնները միջամտում են, իսկ Պարսկաստանում հայերն անվերջ կարելի է ջարդել ապ, բաւական է միայն տրամադրել Շահին ու կառավարութիւնը...

Եւ ահա թաթար պրօվօկատօրները հրապարակ հանելիս բոլոր հնարաւոր մանեւրները։ Քանի անգամ նրանք զարկեցին կեղծ ահակոչնակ՝ թէ հայերը այս ինչ ժամական, այն ինչ տեղում կոտրեցին պարսկասպառակ շէյխերին—և, զժբաղդաբար, այդ սուտ ու զրպարտ հասարի արձագանգները երբեմն լուսում էին Պարսկաստանի զանազան անկիւններում, հակահայկական ցոյցերի մէջ։ Հ. Յ. Դաշնակցութեան շնորհ ընթացքը պարսիկների նկատմամբ Թիֆլիսի և այլ ընդհանուրների մէջ ոչնչ, շատ անգամ փառաբանած «Times»-ի, «Temps»-ի և այլ համաշխարհային օրգանների մէջ իր բարերար ազդեցութիւնն էր անում երբեմնապէս կասկածով բռնած Շահի կառավարութեան վրայ և վիժեցնում էր թուրք խալիֆանութեան անարգ գաւերը։

Սակայն պրօվօկատօրական գործունէութիւնը դադար չունի. այստեղ և այնտեղ շարունակում է հնչել պարսկահպատակ շիաների կեղծ, շինծու հաւատը, թևեղարած թաթար պատարների կողմից։

Օրըստ պերճախօս է այդ տեսակէտից Նէլսե֊Շուշ պատկի միջադէպը... Ազդամի ողբերգութեան տեսուր հերոսները, հանրածանօթ խալիֆան Զաֆար պատները սովորեցնում են մի պարսկատանցի չհամշակի, որ սա հրատարակէ իրը թէ կարևքնդհայերը կատորել են իւր 49 ընկերներին իսկ ինքը մի կերպ փախել, ազատուել է... Ինտրիգին է սարքւում և պարզուում է այդ սուտպի լուրի հրէշաւոր տատիները։ Ինչ ահարկու փոթորիկ կը հանէը Պարսկաստանում՝ շիա պարսիկների այդ մասսային կոտորածի լուրը, եթէ նա ճշդանէը... Մի անգամ եւ ոչ աւելի միտքդ Պիտի խրատուի՞ն վերջապէս սասը, եղեռնագործ հոգիները, որոնց ախտածէտ գործունէութեան միակ հզէսն է՝ իրագործած տեսնել ըստ կարելոյն մեծ չափով—ջարդ, արիւն, աւերակ։ Պիտի սանձահարուի՞ վերջապէս այդ առասպելական ցիներիզմը, որ յատուկ է թաթար խուլիգան պարպտուխներին և որով նրանք յաղթանակել են ձգտում իրենց քաղաքական զրպգենների վրայ, հակառակ ամեն տրամաբանութեան ու բարոյականութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԴՈՒՄԸ

Մեր թղթակցի հեռագրական տեղեկութիւնից արդէն յայտնի է լրիւ

Երկրորդ հասարակութեանը, որ Պետական Դումայում հարցապնդում է զրբեած հայ-թաթարական ընդհարումների մասին, ունի վերջերում երեսներ և Դանակի նահանգներում տեղի ունեցած վերջին դէպքերը։

Ուշագրաւ երևոյթ է դա, անշուշտ, որ հնարաւորութիւն է տալիս բոլոր մեր հնչեցնելու և Ռուսաստանի կեն ասելում —Պետերբուրգում, որ արիւնոտ հարցը այնպիսի մի բազմամարդ ու բազմացեղ ժողովի քննութեան ատաքիայ է գաթաձնում, որպիսին է Պետական Դուման։

Եւ այդ երևոյթը կարևոր նշանակութիւն կարող է ունենալ նախ իր դրական-կոնկրետ արդիւնքով, եթէ միայն Դուման ընդունակ լինի ընդհանրապէս խօսքից—գործի անցնելու, կարուկ քայլեր անելու և ժողովրդի իսկական շահերը պաշտպանելու, միշտ բարձր պահելով արդարութեան ու ճշմարտութեան սկզբունքները։

Բայց գժբաղդաբար, մինչև այժմ փաստերը ցոյց են տուել, որ Դուման բացի կրակոտ ճառեր արտասանելուց ուրիշ ոչինչ չէ անում, մինչդեռ բիւրօկրատական օրէցօր աւելի է ուժեղացնում իր սարսափները՝ աւելի է յանդգնանում իր գաւերի ու ծրագիրների մէջ։

Եւ այդպիսով Տաւրիկեան պալատում բուռն ոգևորութեամբ արծարծած գեղեցիկ սկզբունքները մնում են զուտ դատարկ հնչիւններ. կրակոտ ճառերը ցնդում են Ռուսաստանի արիւնոտ մթնոլորտում, երբև տարբերեն կոչեր, իսկ իրականութիւնը, դառն իրականութիւնը նորից ու նորից ծանր հարուածներ է իջեցնում հարատաւած տարրերի գլխին։

Ահա Տաւրիկեան պալատում Վիտալէի, Հերցէնշտեյնի ու միւս պատգամաւորների բերանից հնչում է պերճախօս և ազդու հարցադրումը հրէական չարագործութեան մասին։ Սակայն ոճրագործ բիւրօկրատիան ոչ թէ ամաչում կամ վախ է արտայայտում, այլ ընդհակառակը ամենացինիկ արհամարհանքի արտայայտութիւնով «Երբոյս ճառերը», նոր չարդ է առաջացնում Բելոստոկում, մի քանի տասնեակ անմեղ մարդկանց արիւնն է հեղեցնում, բազմաթիւ տներ ու խանութներ աւերածութեան է ենթարկում և գարձեալ իր հնաւանդ պատճառաբանութեան առաջ բերում, թէ յեղափոխականների ոտնձգութեանները պատճառով են առաջացել «անկարգութիւնները»։

Հարցադրութիւնում է արիւնոտ չարդ Բելոստոկում—ահա երկու հակադիր երևոյթներ, որ միմեանց հետ շաղկապած մեր դատն իրականութիւնն են չեշտում։

Եւ այդ իրականութիւնը իր անողոք ճառն է հնչեցնում նաև հայ-թուրքական հարցի վերաբերմամբ։ Առաւօտեան հեռագիրը Պետերբուրգից լուր բերեց, թէ հարցաքննում է դրւած Դումայում, իսկ երեկոյեան նոյնպես հեռագրական տեղեկութիւնը հաղորդեց, թէ նոր արիւնահեղութիւն է սկսած Երևանում։

Դումա և Բելոստոկ։

Դումա և Երևան։

Ահա յար և նման զուգադիպութիւններ, որոնք գալիս են մի անգամ ևս յիշեցնելու, թէ զուր է որ և է բարիք, դասակ հետևանք սպասել այժմեան Դումայից, զուր է յոյսեր տածել դէպի «հարցաքննութիւնները»։

Եթէ նոյն իսկ Դուման իր ամբողջ կազմով ևս որոշ եղրակացութեան, ուզեներ հասնելու ցաւ հայ-թուրքական ընդհարումների իսկական հեղինակին ու դեկավարին՝ բիւրօկրատիային, այնուամենայնիւ նա անկարող է այդ անել, որովհետև նրա ձեռքն են միայն մեծամենչուն ճառերը, որոնք անցոր են կառավարութեան սրերի, ուխտների, թնդանօթների ու պուլեմետների համար։

Դառն է այդ, բայց իրողութիւն։ Ուրեմն իզուր չը թմրեցնենք մեր զգայունութիւնը նոր պատրանքներով, իզուր չհաղորդենք մեր ընկերներին, որի հետևանքը դարձեալ նոր յուսախաբութիւն միայն կարող է լինել։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԻՒՆ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԻՍԻ ՎԵՐՋԸ

Բագու, 5 յունիսի

Սխալած չեմ լինի, եթէ ասեմ, որ Բագի բոլոր֊հայկական խաղաղասէր մտաւորականութիւնը մեր հայկական կեանքում հազուագիւտ երևոյթներից մէկը եղաւ, որ այդքան ընդարձակ մերկացումներ բերեց, այդքան հնաոքդրութիւն առաջացրեց և այդքան ժամանակ խլեց Բագի հայ հասարակութիւնից։

Երկու չորրորդ ժողովն էր, որ կայացաւ այդ ընդհանուր ժողովի մէջ, որը մի տեսակ փորրիկ coup d'état եղաւ նախորդ երեք ժողովների վերաբերմամբ։ Բրւն տրամադրական հետևանք նախորդ երեք ժողովից, իրը նրանց որոշումների արդիւնք պիտի երևակայ ժողովը հրաւիրելէ յատկապէս ընդհանրին ընդունելու համար Քաղների ձեռնամուխ լինելը երկու անգամ մերժել էր մասնակցութիւնը այդ յանձնաժողովների ընտրութեան մէջ։ Հետևաբար և հարց կարող էր լինել միայն ընտրել ցանկացողների մասին, որոնք և, իհարկէ, ապատ էին ընտրութեան անել, բայց զրկւած էին իրաւունքից այդ ընտրութիւնը Բագէի տարողի հայ հասարակութեան կողմից անանել այլ միայն կանոնների կողմից, այսինքն՝ ընդհանուրի Ուրեմն և պարզ էր, որ խնդիրների յաջողականութեան լոգիկան պահանջում էր, առաջ ընդունելութեան կարգել՝ պատճառաբանած մերժում ընտրելու մասնակցելու, ապա ցանկացողներին առաջարկել ընտրութեան կառավարելու Այդ ոչ. սկզբում փորձը եղան ընտրութիւնը անպատճառ կայացնել ընդհանրիների առկիցեալով, բայց անյաջողութեան հանդիպելուց յետոյ «Համայնը խորհրդակցութիւնը» որոշել է կատարել ցանկացողների ժողով, հիմնւելով համայնքի գեղամոի, Թիֆլիսից եկած հետագրերի վրայ, որոնք պնդում են, որ ընտրութիւնը կարող է և վերջապէս հանանգստանալ յամանքի գեղամոների վրայ։ Եւ դուբս եկաս հրաւէրը «այսու ցանկացողներին խնդրում ենք անպատճառ ներկայ լինել»։

Ահա և ժողովի գահլինը. խուռն բազմութիւն. գահլեակ վիճաբանութիւններ ժողովի օրինականութեան մասին։ Բուլուզապատն հաստատվում է ընտրելու Բաղմից քսան եւ քառասուն հոգի, ընտրութիւնը, կարծես թէ բազմատանջ պատասխանների կրճատից դուբս գալով յետոփոխանակ կոչւբ լինելու «կոչէն բռնութիւնը, կեցցէ պատուիրեցը»։

Այո, բուրժուազիան էլ գիտէ կոչեր անել, բայց... իր տարեմտութիւնը և վախկոտութիւնը ցոյց տալու համար Հետս չէ ժամը, որ գուցէ բուրժուական մինչև անգամ ոսկեզօծ գնդեր կը կազմէ մտաւլուս յեղափոխութեան ուժը խորտակելու համար, բայց կը խորտակէ...

«Ընտրութիւնը» կատարւում է։ Բայց գոնէ մեր բուրժուազիան աչքեն ընդունակութիւն ցոյց տալ այդ գործում, որ հետաքրքիր լինար իր վերաբերմունքը չը յանձնէ անկարկամ մարդկանց, որոնք արդէն մի քանի անգամ եղել են կոմիսիաներում և անուն են վաստակել իրբև «հայոց ինտերնասիոնալը» պատասխանող Թուրքերի կողմից ընտրւած են մարդիկ, որոնք ոչ մի յոյս չեն ներշնչում, թէ խաղաղապար յանձնաժողովն հենց առաջին նիստից յետոյ անմիջապէս նոր արիւն չի հոսի Բագում։ Եթէ հաւերից էլ գնան այն մարդիկը, որոնք Թուրքերի մէջ յայտնի են իրբև Թուրքի Քշնամի և միայն հայի չարը պատասխանող, պետի հենց առաջին իսկ քայլից փոխադարձ անվստահութիւնը բուռն դնի յանձնաժողովում և նրա վրայ մենք պիտի տեսնենք աւելի շատ, քան ենթադրում ենք։

—

Ամեն մինը այդ ժողովներից մի նոր սիւրպրիզ է բերկրում։ Մի անգամ տեսանք, որ նախկին յեղափոխականը շանիք է ծախում այժմեան յեղափոխական գլխին և բնակչիայի գերկե է նետում։ Միւս անգամին տեսանք մարդիկ, որոնք հենց այժմ էլ հաւանութիւն ունենալով իրենց յեղափոխական անհանել, իրենց պատկերին հաչիւ չեն տալիս. այս անգամ էլ սիւրպրիզը գալիս է մի կուսակցութեան կողմից, որը հաւանութիւն ունի իրեն մեկ իսկական յեղափոխական կազմակերպութիւնը համարելու. եթէ ոչ ամբողջ Ռուսաստանում, գոնէ Կովկասում, Ս.-Դ. Բան. Հ. Կազմակերպութիւնից։

Այս հարցի վերաբերեալ առաջին ժողովում այդ կուսակցութեան անունից խօսողը ընդարձակ մանաժողովի անպէսպութիւնը և միասնական ընդհանրի ցոյց տալով, խաղաղութեան միակ երքը գտնում էր պետական ամրոզ րէժիմի խորտակման մէջ... Իսկ երկրորդ ժողովում նոյն կուսակցութեան անունից խօսող մի ուրիշ պչգան զգացող բուրժուազիայի ժպիտներից, որ ցոյց տալով թէ ինչպես ամեն մի աշխարհայեացքի տէր խմբակ ապատ է անելու ինչ որ ինքը օգտակար է համարում, յայտնեց, որ իրենք ոչ միայն դէմ չեն, որ ընտրութիւն լինի, այլ մինչև անգամ ուրախ կը լինեն, մինչև անգամ կաշկանդեն, որ ընտրութիւն տրւեց բուրժուաներին, ինչ բուռն ծանօթացութեանով նրանք ընդունելին ազգայատիճանական յանձնաժողովներ... բոլշևիկների հրատարակութեան համար։

Մարդիկ, որոնք մեր այս արիւնոտ հնչամանին մատ֊մատ չեն խփել ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը ապահովելու համար, որոնք այս տեսակի ապատագի ժամանակ կատարում են գործերից միայն ամենայատիճանականը՝ Դաշնակցութիւնը վարկաբեկող փաստաթղթեր հաւաքելով, այժմեան իսկ վարչկանում գտնելով իրենց սկզբունքային մաքրութիւնը, գարձեալ Դաշնակցութեանը մի ուժգուր հարած տալու համար (իրենց կարծիքով) քշնամում են բուրժուազիային։

Լաւ է, ոչինչ, ամեն կազմակերպութեան համար, այդպիսի բարեկամներ, որոնք Դաշնակցութիւնից գժգոհ են, շատ կարող են մեր դերը բերել մեր սեր֊ների մանաւանդ գաւառական վաշխառուներից։

Մ. Ցար.

ՔԵՕԼԱՆԻ ԹՈՒՐԲԵՐԸ

Քալիշ (Չիւնդ. գաւ.), 31 մայիսի

Ժամանակ առ ժամանակ լսւել յոյսեր երեք տասնեակ, որ Չիւնդիրը կը շարունակի մնալ իր համեմատական խաղաղութեան մէջ. որոշ հանգամանքներ մէկ֊մէկ գալուց՝ ցրում էին մեր յուսի տասնեակները և մենք մի քանի տարուայ երեք խաղաղ օրերի գնդեցիկ հանգստով։

Բայց միայն՝ ժամանակ առ ժամանակ. որովհետև գալիք նոր փոթորիկների նախազգացումը մեր մէջ֊զգում էր։ Կովկասի հայրենական հանգիստը ծեծող ալեքը՝ ծուրք խուժացին Չիւնդի վայրագ Թուրքերին հանդէպ միշտ ատելի է և՛ մեր միացն ու հոգին։

Միշտ լսւած գրոհների մէջ ինչ ենք եղել մենք այսօր՝ ձիշտ է, Նոյեմբերյան֊Դեկտեմբերյան կռիւներից յետոյ խոշոր դէպքեր տեղի չեն ունեցել Չիւնդիրում. «ամանաւոր» սպառնալիքների (Մեծ֊չէն գիւղի վից տասնապատիկ կոտորւելը և այլն) վրայ էլ պատկերը ուշադրութեան չենք գարձրել֊ամենամեծ կռիւների տղմաւանքը միշտ ծանրացած է եղել մեր կրծքին։

Ընդհանուր ծրագրի առաջ, որ անկեղծ վարպետութեամբ հիւսուած է Թուրքական խորամանկութեան նուրբ թելերից,—այդ ընդհանուր ծրագրի առաջ մենք երբեք չէինք կարող անյողդողդ հաւատով տոգորուել, որ Զիւանշիրի «խաղաղ» օրերը երկարատև են լինելու։

Եւ իրաւունք ենք ունեցել չը հաւատալու։ Այսօր աւելի ուժգնութեամբ քան երէկ, իրար յաջորդող դէպքերը՝ հաստատում են այդ իրաւունքը։

Ահա,—բօլանի Թուրքերը վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը։ Բօլանիների մասին ես արդէն գրել եմ։ Անցեալ նոյեմբերին հայերը դուրս են քշել նրանց (Ջըրախլու, Գեարավանդ և այլն գիւղերից) դէպի Առանի դաշտը։ Դա մի բարեբար հանգամանք դարձաւ Զիւանշիրի հայութեան համար, որի գլխին բօլանիները պատուհաս էին կտրել։

Մէկ արդէն հեռացրած, երբեք ցանկալի չէր հայերին, որ բօլանին յետ դառնար և վերականգնէր իր աւազակարունները։ Խնդիրքողոքներ շատ են եղել հայերից, որպէսզի օօլանի Թուրքերը չը վերադառնան։ Բոլոր հայ գիւղերում, որոնցով գեներալ ֆօն-Ալֆտանը անցել է իր մայիսեան շրջագայութեան ժամանակ,—ամեն տեղ նրան կտրական խնդիրներ են ուղղել, որ բօլանիները հեռու պահեն իրենց նախկին բնակավայրերից։

Նոյն իսկ այստեղի մօլօկանները (Օրլօվօ-Դենիսօվկա և Մինգրէլսկօե գիւղերը) բողոքել են գեներալին, որ բօլանիները նրանց ես վնասներ են պատճառել և, անշուշտ, կը պատճառեն ապագայում։ Բայց նորին պայծառափայլութիւնը՝ լսել չէ ուզեցել։ Հասկանալի է...

Եւ (ինչպէս լսեցինք) գաւառապետ Ցիլիցէնսկու ուղեկցութեամբ բօլանիները խումբխումբ գալիս են վերաբնակւելու իրենց աւերուած գիւղերում։

(Գաւառապետ Ցիլիցէնսկին)...

Գալիս են։ Թոյլ-թոյլ յոյսեր ունէինք,—դըրանք էլ ոչնչացան։

Բօլանիների բացակայութիւնը զօրեղ գրաւական էր, որ հայ-Թուրքական լուրջ ընդհարումներ տեղի չը պէտք է ունենային Զիւանշիրում, քանի որ՝ Թուրքական ուժերն այստեղ ընկճւել—ցրւել են եկել, իսկ հայը բնաւ ցանկութիւն չէ ունեցել նախայարձակ լինելու։

Այսօրւանից սկսած, սակայն, երբ բօլանի Թուրքերը իրենց տեղերն են վերադառնում,—ընդհարումները անխուսափելի են դառնալու։

Անխուսափելի, որովհետև նախ՝ բօլանի Թուրքը, ինքնըստինքեան, անպատճառ վերսկսելու է իր սովորական աւազակութիւններն ու անվերջ հարւածներ է տալու հարևան հային։ Եւ երկրորդ, գլխաւորը,—բօլանիների վերադարձը՝ ընդհանուր ծրագրի պարագրաֆներից մէկը պէտք է համարել։

Այդ պարագրաֆի հեղինակները սազմազէտ գլուխներ են երևում։ Լինելիք կռիւների ժամանակ բօլանիները կարող են զգալի հարւածներ հասցնել հայերին, կտրելով Թալիշ, վերին Զայլու, ներքին Զայլու, Մարագա, Մատաղիս—մէկ կողմից—և Լիւլասալ, Մաղաւուզ (Ջարդախլու), Մեծ-շէն—միւս կողմից—հայկական գիւղերի միջի հաղորդակցութիւնը։

Այդ երկու խումբ գիւղերը կապւած են միմեանց հետ Թարթառ գետի վրայի Ղարաքօրփի (Սև կամուրջ) կոչուած կամուրջով, որի երկու կողմն էլ բռնուած է եղել բօլանիներով և, ուրեմն, բռնուած է լինելու և՛ այսուհետև։

Բօլանիները վերադառնում են։ Խօսք չը կայ, նրանք իրաւունք ունեն վերադառնալու, քանի որ իրենցն է տեղը և այդտեղից նրանք բռնի կերպով են արտաքսուել։ Այդ իրաւունքը, որպէս սոսկ իրաւունք, յարգելի է, սրբագործուել է կառավարութեան—Ալֆտանների և Ցիլիցէնսկիների—կողմից։

Բայց կան իրաւունքներ, որոնց հարկաւոր է միանգամայն ոչնչացնել, երբ նրանք միայն չարիքներ են ստեղծում։ Բօլանի Թուրքերի վերադառնալու իրաւունքը փորձանք պէտք է դառնայ Զիւանշիրում։

Բայց այդ իրաւունքը չը խլեց նրանցից։ Չէր կարող խլել, քանի որ դա մի կենսական անհրաժեշտութիւն է ապայիւմի համար։

Երբ չայլեցէն է իր աւերուած օջախը վերականգնում նա չէ ղեկավարւում «ծրագրային» նպատակներով։ Բայց երբ բօլանի Թուրքն է վերադառնալ ուզում իր քանդուած խրճիթը,—ծիծաղելի կը լինէր խօսել «Թուրքական ֆէնիքսի» մասին։ Այն, ինչ որ սազում է իւլիտներին, չի սազի մի եզան...

Չէ, վատ օրեր է տեսնելու Զիւանշիրը։

Վալոդ

ԼՐԱՏՈՒ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, 8 յունիսի 4 ժ. 35 ր. եր.

Լարւած դրութիւնը դեռ շարունակւում է։ Փողոցներում շարժումը դադարել է։ Մերթ ընդ մերթ լսւում են հրացանաձգութեան հատ—հատ ձայներ։ Զոհերի ճիշտ թիւը պարզւած չէ։ Զօրքը շրջում է փողոցներում։

Կարս, 6 յունիսի

Թէ քաղաքի և թէ գիւղերի հայ ազգաբնակութեան շրջաններում Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները տարածում են հետևեալ բովանդակութեամբ ազդ.

Երէկ, ամսիս 30-ին, քաղաքիս մօտ, մի խումբ զինւած Թուրքերի ու քրդերի ձեռքով սպանւած են 3 հատ գիւղացիներ և վիրաւորւած են երկուսը։

Այս առթիւ Զրաբերդում կայացած շրջանային ժողովը շտապում է յայտարարել բոլոր մարմիններին և անհատներին, որ որև է կերպով որև է վրէժխնդրական քայլ չը փորձեն անել հանդէպ քիւրդ ու տաճիկ ազգաբնակութեան և ամեն ջանք թափեն պահպանելու համար ներկայի հաշտ յարաբերութիւնները։

Հ. Յ. Դաշնակցութեան Զրաբերդի շրջանային ժողով։

Զրաբերդ, 31 Մայիսի

Խանբենդ, 5 յունիսի

Շուշում և դուրսը հրացանաձգութիւն է տեղի ունենում։ Թուրքերը կտրել են հայոց գերեզմանատունը և Խաչէն եկող ճանապարհորդներին թոյլ չեն տալիս—արձակելով նրանց վրայ հրացան։

Գաւառապետը խնդրել է лєтучій отрядъ-ան և Բալիւջայի կօզակների հարևաքակը։

Ասկարանը բռնել են Թուրքերը, որ հրացանաձգութիւն են ունեցել զինւորների հետ։ Թուրքերից սպանւել 4 հոգի, զինւորներից վիրաւորւել է մէկը։ Մնացած Թուրքերը պաշարւած են Ասկարանում։

Եթէ Նահանգապետ Գօլօշչապօվը այնպէս վարւեց, ինչպէս վարւել է մինչև այժմ Աղդամի Թուրքերի հետ, կոտորածը դարձեալ անխուսափելի է։

Գիրը գիւղ (Գեօկչայի գաւ.) 6 յունիսի

Բօզավանդի, հայ գիւղի բաղերում շրջում են երեք զինւած Թուրքեր, երևի աւազակներ։ Մի քանի օր առաջ քուրդ Եղբարբէգ Թուրք գիւղի մօտակայքում Գեօկչայ գետի վրայ, ղալոգեցի Տէր-Գասպարեանցի ջրաղացում նկատւում են 6 զինւած Թուրքեր. Եղբարբէգցիք յարձակւում են այդ աւազակների վրայ, 5 ին ձերբակալում են, մէկը փախչում է, բռնւածներին ոստիկանութիւնն ազատ է թողնում, իսկ շրջող Թուրք աւազակներին չը տեսնող ձևանում։ Ռուշանաշէնցի սպանւած Վանէսապօրը սպանողները գտնւեցին. տեղիս պրիստաւը տեղեկանալով որ Թափչի Թուրք գիւղի մօտ մի ջրաղացում կան 3 զինուած Թուրքեր և որ մէկի ձեռքի հրացանը սպանուած Վանէսինն է,—ուղարկում է ստրաժնիկներ և ձերբակալում նրանց. ստուգւում է, որ իսկապէս հրացանը Վանէսինն է. հրացանը ընդունելով տեղական քննիչը՝ ձերբակալուածներին ազատ է թողնում. բռնուածները լեզգիներ էին։

Տեղական իսկական քննիչի պաշտօն վարողը ժամանակաւորապէս բացակայ է գաւառից և նրա պարտականութիւնները ստանձնած հաշտարար դատաւոր Գարաեւը չի ձեռնարկում քննութեան, նոյն իսկ բժշկական գործերում։ Եկւոր Ջէմալցի քոչւորներից մէկի մօտ Դիալլու Թուրք գիւղացիները ճանաչում են 2 տարի առաջ իրենց մի թալանուած ձիուն և նոյն իսկ թալանողին. վերջինս ձիու հետ յանձնում են պրիստաւին, սա էլ նոյն քննիչին, որ դարձեալ բաց է թողնում։

Ահա այսպիսի անտարբեր վերաբերմունք է ցոյց տալիս տեղիս ադմինիստրացիան...

Ցովակիմ

Բաքու, 7 յունիսի

Թուրքական «Հէյաթ» լրագիրը Պետական Դումայի կովկասեան խմբի պատգամաւորների առանձին կենսագրականը տալուց յետոյ առաջարկում է պաշտպանել հետևեալ խնդիրները.

1. Մենք մարդ ենք. Ուրեմն ամենից առաջ միանալով ամբողջ Դումայի հետ, առանց կրօնի ու ցեղի խտրութեան, պաշտպանեցէք մարդկութիւնն ու մարդկային իրաւունքը. աշխատեցէք ազատել հարստահարուած դասակարգերը բռնակալ դասակարգերի յարձակումներից, ամբողջական հաւասարութիւն պահանջեցէք անտուն և անհող երկրագործների համար. մեր գիւղացիների համար հող պահանջեցէք. մեր պրօլետարիատի ապրելու պայմանները դիւրացնել աշխատեցէք։

2. Մենք կովկասցիներ ենք. Որ Կովկասի բնակիչները իրենց գործերը իրենք վարեն. պահանջեցէք ինքնօրէնութիւն։

3. Մենք մուսուլման ենք. Հետևաբար մեր կրօնական հաւատալիքի մէջ, մեր խղճի ազատութեան համար պահանջեցէք այն, ինչ որ հարկաւոր է։

4. Մենք Թուրք ենք. Մեր լեզուի, գրականութեան առաջդիմելուն արգելք եղող ամէն տեսակ պատնէշները քանդելուն ու ոչնչացնելուն ջանք մի խնայէք։

Ահա այս չորս կէտերն են, որ ամենևին ձեր մտքից հանելու չէք»։

Դարալագեազ, 6 յունիսի

Մեր շրջանի խաղաղութիւնը նորից խանգարել է շնորհիւ Թուրք աւազակապետների։ Այս աւազակապետները անցեալ տարւայ Դարալագեազի կոտորածի ղեկավարներն են, որոնք թալանել են հայ գիւղերը Ելփին, Մարտիրոս, Գնդեւազ, Ազատէկ, Հասան-գիւղ, Ղոյթուր, և այլն. զանազան գիւղերից դրանց մէջ աչքի են ընկնում Բալլալահի-Ալի, Ալի Սափար Ալի օղլի, Խաչի-սու գիւղից, Ղըզըլի-Հասան Ալի օղլի, Բաշնուլ Ալլահ վերդի օղլի, Հորս գիւղից, Շամիր Ալլահ-վերան օղլի, Դինձէի վանքից. Ալափէր Հաջի-Նամազ օղլի, Ղաւուդուշեցից։

Մայիսի 1-ից այս յիշեալ աւազակապետները երևան են եկել իրենց աւազակային խմբերով և սկսել են նախկին գործունէութիւնը, առանց վախենալու կառավարչական պաշտօնեաներից, զօրքից։

Մօտ օրերս քաջագործութիւններն են կատարել. մայիսի 14-ին Խաչէն գիւղից տարել են 4 եզ, 12 ոչխար. Սէս գիւղից 18-ին 30 ոչխար, Մալիշկա գիւղից մայիսի 20-ին 10 ոչխար, մայիսի 20-ին Բէշիշբենդից 520 ոչխար, որտեղ բնակւում է պրիստաւը իր բարաժնիկներով և մի օֆիցեր 60 կօզակով. տարել են Բէշիշ-վէրան գիւղից 27-ին 40 ոչխար, մայիսի 30-ին Ջանախչի գիւղից տարել են 700 ոչխար, բայց աւարը յետ է խըլւել գիւղում գտնուող մի քանի երիտասարդների շնորհիւ։ Եղել է երկու կողմից էլ հրացանաձգութիւն։ Կռիւը տևել է 1 ժամ. հայերի և Թուրքերի մէջ ներհակութիւնը կարւել է. Թուրքերը բօյկոտ են յայտարարել հայերի դէմ։

Մայիսի 22-ին Սէս գիւղի մօտից անցնում է 40 հոգուց բաղկացած մի խումբ, որոնք պատահելով Սէս գիւղի կանանց դաշտումը, սկսում են նրանց վրայ կրակ բացել։ Կանայք լեղապատառ թափւում են գիւղը. գիւղացիները դիմում են Սուլթանբէգի կամանդիրին, սակայն նա ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց։ Այս բոլոր դէպքերի մասին առանձնապէս դիմել են կառավարութեանը, բայց ոչ մի հետևանք։

Քոչւորները Շարուրից և Ղարաբաղից եկել են. Դարալագեազը շրջապատուած է քոչւորներով, որոնց թիւը հասնում է 50,000-ի. բոլորը բացարձակապէս զինւած են. կառավարութիւնը հայերից ամենայետին զէնքերն անգամ խլում է, իսկ Թուրքերը զինւած ազատ սարերն են բարձրանում։ Կօզակների լրբութիւնը ծայրայեղութեան է հասել, գիւղերում բացարձակապէս բռնաբարում են հայ կանանց պատիւը։ Այսօր կամ վաղը սպասւում են Թուրքերի կողմից յարձակումներ հայ գիւղերի վրայ։ Ինչ կը լինի վերջը, չը գիտենք, մնացել ենք անօգնական։

Գիւղացի

Վաղարշապատ, 5 յունիսի

Ցուցւում է Էջմիածնի գաւառի Թուրք տարրը, նա համախմբումներ է կատարում։ Ինչ որ պատրաստութիւններ են տեսնւում Ազարակում Բահրամ բէգի մօտ և Ուշիում։ Վերջնում հաւաքւած Թուրքերն արդէն սկսել են իրենց սխրագործութիւնները. կտրել են Արաբանի և Աշտարակի ու այլ հայաբնակ գիւղերի յարաբերութիւնը։ Արբաթի և միքանի այլ Թուրք գիւղերի խղճուկ բնակիչները այսօր խիստ համարձակ են դառել և օրը ցերեկով դաշտ են դուրս գալիս ու հայհոյում, սպառնալիքներ կարդում դաշտում աշխատող հայ կանանց և հայ տղամարդոց։

Խոտհնձի ժամանակ է, բայց գիւղացին դժւարանում է դաշտ դուրս գալ. բամբակը չանաքելու ժամանակն է, սակայն հայ գեղջկուհին հաւատարիմ իր պապերի և տատերի թողած ժառանգութեան, չի կամենում անասնացած Թուրք խուժանի կրքերի ենթակայ լինել, ինչպէս Ղարաբաղի միքանի տեղերում։

Գիւղերի միջի հաղորդակցութիւնը հետզհետէ կտրւում է. կարևոր գործով գնացողներն էլ առանձին երկիւղածութեամբ և զգուշաւոր քայլերով առաջ գնում, որովհետև ինքնապաշտպանութեան համար զէնք կրելու իրաւունք չունենք։

Հայը Թուրքի գիւղ գնալ անկարող է, որովհետև հարևանը նամարդ է, իր բարեկամ-քիրւայ հային անգամ ընդունակ է իր տան մէջ վնասելու։ Սակայն այդպէս չէ հայը. հայ գիւղերում այս բոլէին Թուրք ընտանիքներ են ապրում, որոնք անվնաս շարունակում են ապրել և մօտ յարաբերութիւն ունենալ հայերի հետ։

Մայիսի 30-ին Երևանից Էջմիածին տանող ճանապարհի վրայ պատահած մի ստրաժնիկի և մի հայի սպանութեան դէպքի վերաբերմամբ տեղական իշխանութեան ցոյց տուած անտարբեր վերաբերմունքը խիստ գրգռել է Վաղարշապատի հասարակութեան և ահա թէ ինչու։

Անցեալ անգամ յատնել էի, որ պրիստաւին յաջողւել է ձերբակալել երեք զինւած կասկածելի Թուրքերի, բայց յետոյ որքան կարողացանք տեղեկանալ հաւաստի աղբիւրից, ինչ որ կասկածելի եղանակով քննութիւն կատարելուց յետոյ ազատ է թողնւել, առանց նոյն իսկ զինաթափ անելու։

Թուրքերի ձերբակալման լուրն ստանալուն պէս՝ հայերը վախենալով, թէ սովորականի նման այս անգամ ևս յանցաւոր Թուրքերին իշխանութիւնը ձեռքից բաց կը թողնի, շտապեց մի քանի հոգուց բաղկացած պատգամաւորութիւն ուղարկել գաւառապետի մօտ, որ ձերբակալւածները Վաղարշապատ բերւեն և ցոյց տրւեն թալանողներին։ Գաւառապետը խոստացաւ այդ անել և անմիջապէս գրեց պրիստաւին, բայց կէս ժամ չանցած լսեցինք, որ պրիստաւը եկել է առանց Թուրքերի։

Իշխանութեան այս վարմունքից կատաղած Վաղարշապատի հասարակութիւնը յունիսի 1-ին հաւաքւելով գիւղական դատարան, թւով մինչև 500 հոգի ընտրեց մի թարգման և ուղևորւեց գաւառապետի մօտ իր զայրոյթը յայտնելու և արդարութիւն՝ յանցագործներին ձերբակալել և պրիստաւի ձերբակալած Թուրքերի զինաթափ անելը պահանջելու։

Գաւառապետը հանդարտութեամբ լսեց յուզւած ժողովրդի պահանջը, նրա մի քանի պահանջները արդարացի գտաւ. ամեն կերպ աշխատում էր ազատել իրեն իր վրայ բարդած մեղադրանքներից, սակայն անկարող լինելով ժողովրդին բաւարարութիւն տալ, առաջարկեց ընտրել հինգ հոգի, որպէսզի հնարաւորութիւն ունենայ հասարակութեան յուզման պատճառները որոշակի լսելու և ապա վճռական տալու։ Այդպէս էլ եղաւ։

Գաւառապետ Լեմբերմանը լսելով ընտրեալներից ժողովրդի պահանջը, խոստացել է անմիջապէս զինաթափ անել երեք Թուրքերին և ձերբակալել իսկական յանցաւորներին, որոնց հետքն արդէն գտել է։

Ցանկալի է, որ Լեմբերմանը ինքն անձամբ, առանց որև է հասարակութեան աչքում կասկածելի մարդկանց խորհրդի, կառավարէ գաւառը անաչառ կերպով և միայն այս դէպքում կարող է նրա վարկը հասարակութեան աչքում նորից բարձրանալ։

Գ.

ԹԻՖԼԻՍ

✦ Յունիսի 7-ից Վրաստանի հոգևորականների ժողովն սկսեց իր նիստերը և անցաւ հերթական խնդիրների քննութեանը։

Սակայն նախ քան ժողովի պարապմունքներին անցնելը՝ կարդացւեց Վրաստանի թեմի ռուս հոգևորականների գրութիւնը, որով մերժում են իրենց մասնակցութիւնը այդ ժողովին, ասելով որ «մենք չենք կարող հոգևորականների ժողովի նիստերին ներկայ գտնւել, որոշ պատճառներ ի նկատի առնելով. իսկ այդ պատճառները չենք կարող յայտնել ժողովին. այդ մասին տեղեկութիւն է տրւած միայն օբեր-պրոկուրորին և էկզարխին»։ Ժողովը լսելով ռուս քահանաների յայտարարութիւնը կայացրեց հետևեալ որոշումը.

«Մեզ համար անհասկանալի է ռուս քահանաների յայտնած բօյկոտը ժողովին և շատ ենք ցաւում, որ այսպիսի անտագոնիզմ մէջ տեղ եկաւ մեր և ռուս քահանաների մէջ»։

✦ Երէկ մենք հաղորդել էինք, որ մօտ 400 հայ-Թուրք-բանւորներ ձերբակալւեցին իշխանութեան կողմից. այժմ, ինչպէս տեղեկացանք, դրանք բոլորն ազատ են, բացի անցաթուղթ չունեցողներից։

✦ Երէկ գիշեր, ժամի 10-ին, Շէյթան բազարում, Թուրքերը անցնող կառքի վրայ սկըսել են կրակել, բայց ոչ ոք չէ վնասւել։

✦ Դէպօյում գործադուլ արած ընկերներին օգնելու համար գործադուլ արին կօնդուկտօրները, վատմանները և կօնտրօլները։—Երէկ էլեկտրական քարշը չէր բանում։

✦ Բանւորների գործադուլի պատճառով առժամանակ փակւած են Բօզարճեանի և Էնֆիաճեանի գործարանները։

✦ Երբ Պետական Դումայի Կովկասի պատգամաւորները պատրաստւում էին ճանապարհ ընկնելու դէպի Պետերբուրգ, այդ ժամանակ Թիֆլիսի պատգամաւոր Ն. Ժորդանիայի ոսկէ ժամացոյցը գողացան։ Այդ բանը լսելով ս. դեմօկրատական կազմակերպութիւնը սկսեց խիստ հետամուտ լինել գողին գտնելու։ Ժամացոյցը իսկապէս գտնւեց և ուղարկւեց տիրոջը։

✦ Երէկ քաղաքումս կպցրած էին ընդհանուր Նահանգապետի կողմից յայտարարութիւններ, ինչպէս երևում է պրօվօկատօրական նպատակով, որոնց մէջ գրւած էր, թէ ընդ.—Նահանգապետը կայսրի ներկայացուցիչ լինելով, պէտք է, որ յարգւի հասարակութեան կողմից թէ փողոցներում, գլխարկ հանելով, և

ԹԵՐԹՕՆ

ԴԱՐՁԵԱԼ ՄԷԿԸ

«Ժամանակը սթափւելու»

Մի սարսափելի ամբաստանագիր ես... Դաշնակցութեան դէմ. tout à la mode... Սարսափելի մանաւանդ այն պատճառով՝ որ հեղինակը պ. Մռաւեան, «հեղինակաւոր» մարդ է երևում, «ծանօթ» կուսակցութեան ամբողջ կեանքի, նրա ամբողջ անցեալի ու ներկայի հետ։ Նա ոչ միայն ծանօթ է Դաշնակցութեան հետ, այլ և ունի իր ձեռքում հայութեան բովանդակ էվօլիւցիայի բանալին, նրա լուսաբանութեան գերագոյն միջոցը... Բաւական է, որ տիրում է հայ սօցիալ-դեմոկրատների ֆրազէօլօգիային։

Պարոն Մռաւեանի համար՝

1) Տաճկահայոց դատը հայ բուրժուազիայի ահագործման նիւթ է և նրա դասակարգային իղձերի մարմնացում.

2) Հայ-Թուրքական կռիւը իր ծագման մէջ բուրժուազիայի և ազնուականութեան պայքար» է.

3) Արծրունու և հայ լիբերալիզմի համերաշխութեան ու եղբայրութեան կոչերը հարևան ազգերին՝ Թուրքին ու վրացուն՝ ծնունդ են դասակարգային տիրապետութեան տենչանքների, և այլն և այլն։

«Մշակ»-ի քարոզները արձագանք չէին գըտնում Թուրքերի և վրացիների մէջ, որովհետև—ասում է պ. Մռաւեան—«նրանք (Թուրքն ու վրացին) լաւ էին ըմբռնում, որ բուրժուական «Մշակ»-ի բերանում եղբայրութեան քարոզը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մարտական կոչ, որի նպատակն է խլել վրացիներից և Թուրքերից, աւելի ճիշտը, նրանց ազնուականութիւնից ֆէօդալական 'իշխանութիւնը և ֆէօդալական կարգերի տեղ հաստատել սեփականը, բուրժուականը» (տես եր. 7)։ Զարմանալի չէ, որ պարոնի աչքում Գրիգոր Արծրունին հանդիսանում է նոյն կատէգօրիայի դեմօկրատ, նոյնպիսի ժողովրդասէր, ինչպէս Պօբէդօնօսցեւը, Սուվօրինը, Աղայեւը... (տես եր. 34)։

Զենք ծանրանում։ Ընթերցողը ինքը կը գնահատէ մտքի այդ բնորոշ, կուրծք արտադրութիւնները։

Նոյն սօցիալ-դեմօկրատական արսենալից վերցրած զէնքերով՝ պ. Մռաւեան պատամբում է և Տաճկահայաստանի «բուրժուա-յեղափոխական» շարժումների դէմ։ Նա կարծես թէ տաճկահայ դատի և յեղափոխական շարժումների մէջ չէ տեսնում ուրիշ գործօն, բացի կովկասահայ բուրժուազիայից, նրա դասակարգային իղձերից ու ձգտումներից։

Կովկասահայ բուրժուազիան էր, որ յղացաւ ազգային ինքնուրոյնութեան գաղափարը. տեսնելով, որ Կովկասում անկարելի է հիմնել ազգային պետութիւն, նա ուզեց ստեղծել սահմանի միւս կողմը այդպիսի մի պետութիւն, «որը նրա շահերի հաւատարիմ պաշտպանը լինէր» (տես եր. 17)։

Եւ ինչպէս որ Գրիգոր Արծրունին մտնում է Պօբէդօնօսցեւների ու Սուվօրինների կատէգօրիայի մէջ, այնպէս էլ հայոց բուրժուազիան հաշււում է պ. Մռաւեանի բերանով, իբրև «հարազատ եղբայր այն բուրժուազիայի, որը պահանջում է տիրել Մանջուրիային»։ Արծրունին և մշակականները, տաճկահայոց դատը պաշտպանելով, բնաւ չէին մտածում հայ տառապող, հարստահարւած ժողովրդի մասին, այլ մտածում էին միայն հայ բուրժուազիայի ապագայ դասակարգային արտօնութիւնների մասին, ճիշտ այնպէս, ինչպէս Բէզօբրազովները ու Ալէքսէեւները պաշտպանում էին Մանջուրիայի դատը (եր. 20)։

Այդ բոլորից յետոյ խիստ բնական է թւում պ. Մռաւեանին, որ կովկասահայ բուրժուազիան «իր փողի քսակը բաց արաւ Դաշնակցութեան առաջ»։ Պարոնը թերևս տեղեակ է առանձին գաղտնիքների. ուրեմն մենք գիտենք՝ որ բուրժուազիայի քսակը Դաշնակցութեան առաջ միշտ աւելի դիւրութեամբ փակւել է, քան բացւել։

Կովկասահայ բուրժուազիան հմայեց, գերեց «Դաշնակցութիւնը»... սա «կորցրեց իր ուղեցոյց աստղը» և ձեռք մեկնեց բուրժուազիային... Ո՞վ սոսկալի երևակայութիւն... Եւ դա յիրաւի մի ոճիր էր, մի crime de lése humanité... և պ. Մռաւեան գրգռւում է, ներքնային ցնցումներ է անում, մտածելով, թէ ինչպէս մի ժողովրդի բոլոր տարրերը—սօցիալիստ ու ազատամիտ, պրօլետար ու բուրժուա—կարող են թև թևի տուած ձգտել ազատելու անխուսափելի կորստեան անդունդից մի այլ ժողովուրդ, որի հետ նա կապւած է արեան կապերով, ամբողջ դարերով, ամբողջ պատմութեամբ։ Պ. Մռաւեան իր հայ սօցիալ-դեմօկրատական ֆրազէօլօգիան անգիր անելիս, մոռացել է գիտել, տեղեկանալ, թէ ինչպէս են նայում այդ տեսակ ծանր խնդիրների վրայ եւրօպական սօցիալ-դեմօկրատները և նրանց գիտական նախահայրերը։

Ի՞նչ օգուտ կովկասահայ ժողովրդին, եթէ Տաճկահայաստանը ազատագրւի... Այդ հարցումն է տալիս ինքն իրեն՝ մարքսիստական ֆօրմուլաներով գերւած ուղեղը, որը, սակայն, մարքսիզմից քաղել է միայն նրա չոր, գռեհիկ, նիւթապաշտական էլէմէնտները։ Ի՞նչ շահ ունի կովկասահայը... «Ենթադրենք, թէ այնտեղ, Տաճկահայաստանում մենք ստեղծեցինք մի ազատ հայրենիք, սեփական կուլտուրա, գլուխ դնելու տեղ։ Բայց արդեօք կովկասահայ աշխատաւոր մասսան ինչ միջոցով կարող էր օգտւել այդ ազատ հայրենիքից, սեփական կուլտուրայից» (եր. 19)...

Եւ սակայն, միամտացէք ընթերցող, պ. Մռաւեանը չէ ժխտում տաճկահայ դատը. նա ընդունում է այդ դատը, ընդունում է, որ կովկասահայերս պիտի օգնենք, աջակցենք տաճկահայերին, միայն տարբեր, սօցիալ-դեմօկրատական եղանակով։ Տաճկահայ ազատագրական շարժումը պէտք է լինի «կովկասահայերի մարդասիրական հոգացողութեան *) առարկայ»... «Բոլոր երկրների աշխատաւոր ժողովուրդները իրար եղբայրներ են։ Եղբայրը չէ կարող սառնասիրտ նայել իր վիրաւոր եղբօր վրայ»—փիլիսոփայում է պ. Մռաւեան և ինքն էլ ճնշւելով այդ կօսմօպօլիտական սանտիմենտալ զառանցանքից, շտապում է աւելացնել, որ եթէ այնուամենայնիւ, բոլոր երկրների աշխատաւոր ժողովուրդները ձեռք չեն մեկնում իրենց արնաքամ եղբօրը, տաճկահային, դրա պատճառն այն է՝ որ «նրանք, շատ հեռու են տաճկահայ ժողովրդից, ոչ միայն տարածութեամբ, այլ և իրենց կեանքի պայմաններով, նրանք չեն հասկանում տաճկահայ ժողովրդի դիմմարդկային տանջանքները։ Չէ որ նրանք երբեք չեն զգացել այդ տանջանքները։ Բայց մենք, կովկասահայերս, մենք որ մի ժամանակ ապրել ենք տաճիկ և պարսիկ դաժան լուծի տակ, մի՞թէ շատ թէ քիչ հասկանում ենք տաճկահայերի դրութիւնը»։

Պ. Մռաւեանի պատմական էրուդիցիան կարող է և իրօք շատ ընդարձակ լինել, միայն թէ մենք գիտենք, որ մի շարք ժողովուրդներ—յոյն, սերբ, մօլդավ-վալախ և այլն—որոնք կրել են մօտիկ անցեալում միևնոյն լուծը, ապրել են մօտաւորապէս նոյն տառապանքները, և այնուամենայնիւ, նրանք դէպի հայ տառապող ժողովուրդը ցոյց են տալիս ամենաշատը մի գերագոյն անտարբերութիւն։

Դրութիւնը հասկանալը, միևնոյն լծի տակ ապրած լինելը դեռ ևս պայման չեն համակրութեան և աջակցութեան։ Եւ եթէ այսօր կովկասահայ ժողովուրդը լցւած է խոր կարեկցութեամբ դէպի Տարօնի ու Վասպուրականի հոգեվարք մասսան, եթէ նա ապրում է վերջինիս վշտերն ու ուրախութիւնները, դրա պատճառն այն չէ, որ մի ժամանակ ինքն էլ ապրել է «տաճիկ ու պարսիկ դաժան լծի տակ», որ նա «շատ թէ քիչ հասկանում է տաճկահայերի դրութիւնը», պատճառն այն է, որ այդ արիւնակից, հեծեծող մասսան նրա, կովկասահայի արիւնակիցն է, կապւած է նրա հետ մի բիչ աւելի սերտ ու ամուր կապով, քան պ. Մռաւեանի սօցիալ-դեմօկրատական լէքսիկօնից վերցրած՝ «մարդասիրական հոգացողութիւնը»։

Հայ սօցիալ-դեմօկրատները կարող են պատռել իրենց կոկորդները, ապազգայնական կօսմօպօլիտիզմ քարոզելով, ցեղային-արիւնակցական կապերը ոչինչ հաշւելով,—պատմական-հոգեբանական իրականութիւնը դրանից չի փոխւի։

«Մարդասիրական հոգացողութեան առարկայ»... «Տաճկահայաստանի ազատագրումը՝ միայն տաճկահայերի մասնաւոր գործ»... Նրան «հարկաւոր է աւելի կամ պակաս աջակցութիւն ցոյց տալ»... Այսպէս է տրամաբանում պ. Մռաւեանը և նա յայտարարում է, որ այդպէս են մտածում «կովկասահայ աշխատաւոր ժողովրդի իղէօլօգները» (եր. 25։)

*) Ստորագծումը մենք ենք։

թէ հասարակական տեղերում, ուրի եինելու։ Այս յայտարարութիւնը ոստիկանութիւնը պոկոտեց։

ԿՈՎԿԱՍ

◆ Նուխի։ Ամսիս 4-ին սաստիկ անձրևախառն կարկուտ եկաւ, որը տևեց ամբողջ 22 րոպէ։—Սա երկրորդ անգամն է, որ Նուխին ենթարկւում է այսպիսի դժբախտութեան։—Բոլոր եղած բերքերը՝ բանջարանոցները, խաղողի և թթի այգիները բոլորովին փչացրւած են։

Բոժոժը մինչ մի շաբթից կարող էինք Նուխում պատրաստ ունենալ, բայց կարկուտը եկաւ խլեց բոժոժի որդները՝ կերակրելու տերևը։—

◆ Բագուի «Նակօր» լրագիրը արդէն մի շաբաթ է, որ լոյս չէ տեսնում. թէև առանձին կարգադրութիւն չէ եղել, բայց քաղաքումս պտտող լուրերին նայած, նրա հրատարակութիւնը արգելւած է։ (Իրշադ)

◆ Պարսկական ընդհանուր հիւպատոսը դիմել է կենտրօնական իշխանութեան, որ միջոցներ ձեռք առնեն Երևանում ու Կարսում տեղի ունեցած դէպքերի՝ տարածման դէմ։ (Իրշադ)

◆ Վրաստանից։ Գօրեայ քաղաքի գործակատարներն ու բանւորները նոյնպէս արձագանք տւին Թիֆլիսի ընկերներին։ Մայիսի 26-ին յայտարարեցին, որ խանութները պէտք է բացւեն առաւօտեան ժամը 7-ից և փակւեն երեկոյեան ժամը 6-ին։ Եւ իսկապէս առաջին երկու օրը խանութները բացւում էին ժամը 7-ին և փակւում երեկոյեան ժամը 6-ին։ Սակայն յետոյ լուր տարածւեց քաղաքում իբր թէ ոստիկանութիւնը մտադրել է ջարդել այն խանութները, որոնք վերոյիշեալ ժամերին բաց կանեն և կը փակեն։

Մայիսի 28-ին գործակատարների և բանւորների միացեալ միտինգը որոշեց պնդել իրենց պահանջների վրայ։

Օրը ցերեկով յարձակումներն ու թալանները շարունակւում են։ Այս քանի օրերս մի գրութիւնն են ուղղել սոց.-դեմօկրատների անունից տեղիս վաճառական Սողոմոնեանցին, որից պահանջում են 50 րուբլի տանել և դնել քաղաքային այգում նշանակւած տեղում։ Սողոմոնեանը նամակի բովանդակութեան մասին յայտնում է տեղիս սօցիալ-դեմօկրատներին, որոնք և մարդիկ են նշանակում անյայտ անձնաւորութիւններին բռնելու համար, միևնոյն ժամանակ խորհուրդ են տալիս Սողոմոնեանին մի բան տանել և դնել նշանակած տեղը։

Այդպիսով բռնւում է քաղաքային դպրոցի չորրորդ դասարանի աշակերտ Կ. Թ...ձէն, որը քննութեան ժամանակը անւանում է և իր ընկերների ազգանունները, որոնց մէջ, ինչպէս պատմում են, գտնւում նաև սոց.-դեմօկրատ կուսակցութեան անդամները։

Տեղիս երիտասարդութեան մէջ միտք է յղացել հանրամատչելի ներկայացումներ տալ հասարակ դասի համար. իսկ ուսանողների մի խումբ ընկերութիւն է կազմել մատչելի գներով պատրաստել աշակերտներին դպրոցներում ընդունել տալու համար։ «Շրոմա»

◆ Յունիսի 8 ին Ճիաթուրեան մարգանեցի շրջանի բանւորները գործադուլ արին և տնտեսական պահանջներ դրին. դրանց միացան կայարաններում մարգանից կրող բոլոր բանւորները։

◆ Գանձակի ընդհ. նահանգապետը միջնորդել է Փոխարքային, որպէսզի Շուշու գաւառի Սախտարաշէն գիւղին 1720 րուբլի նպաստ տրւի գանձարանից։ Այդ գիւղը վնասւել է թէ հայ-թուրքական կռուածից և թէ կարկուտից։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Յաճախ լուրեր են պտտում, որ մինիստրները վճռել են պաշտպանել պրէմիէր Գօրեմիկինի անտարբեր քաղաքականութեան դէմ (sic)։ Մինիստրների կարծիքով ներկայ մօմէնտը յիշեցնում է նոյեմբերը և դեկտեմբերի սկիզբը։ Երկիրը բոլորովին չէ խաղաղել, ինչպէս մի ժամանակ թւում էր Վիտտէ-Դուրնովօին։ Տէրրօրիստական գործողութիւնները ոչ միայն չը վերջացան, այլ շատացան։ Քաղաքներում և գործարանային կենտրօններում տեղի են ունենում միտինգներ։ Գիւղերում վերսկսւում է ագրարային շարժումը, և հեռու չէ այն օրը, երբ կը վերականգնի գիւղացիական միութիւնը։ Յեղափոխական մամուլը նորից վերածնւել է խոշոր կենտրօններում։ Արհեստակցական միութիւնները վերստին կեանք են առել և շարունակում են իրենց յեղափոխական գործը օրինականի դիմակի տակ։ Վերջապէս, զօրքերի մէջ նորից յուզմունք է նկատւում, թէև նաւատորմիղը դեռ ևս հանգիստ է։ Ահա այս բոլոր հանգամանքները ստիպում են պ. պ. Ստօլիպինին, Բեդիկէրին և Ստիշինսկուն պնդելու, որ մինիստրների խորհուրդը դիմէ այն բէպրէսիաներին, որոնք վճռւել են դեկլարացիա կազմելու ժամանակ։ «Дума»

◆ Կիևից հաղորդում են «Рѣчь»-ին, որ Ցաստօվում գործադուլ են արել 26 սարաժնիկ և հրաժարւել են գիւղացիներին խաղացնելուց։

◆ Ասում են, թէ ֆրանսիական հիւպատոսը պաշտօնապէս խնդրել է ռուս կառավարութիւնից մանրամասն տեղեկութիւններ տալ Ռուսաստանի առևտրի մասին։

Այս պահանջ-խնդիրը, անշուշտ, կապ ունի նոր փոխառութեան բանակցութիւնների հետ։ «Рѣчь.»

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը որոշել է Պետերբուրգից աքսորել 140 մարդկանց. դրանց մեծ մասը բանւորներ ու գիւղացիներ են։ «Рѣчь»

◆ Թիֆլիսի ժաման. ընդհ. նահանգապետ գեներալ-մայոր Տիմօֆէևը յաջող ծառայութեան համար գեներալ-լէյտենանտ կոչման է արժանացել։ «Рѣчь»

◆ Թէև հեռ. գործակալութիւնը յայտարարեց, որ Կուրսկ քաղաքի զօրքի մէջ խմորումը դադարել է, բայց «Современникъ»-ի խմբագրութիւնը հաստատապէս տեղեկացել է, որ խմորումը հետզհետէ լայն ծաւալ է ստանում, տեղի են ունենում ժողովներ և միտինգներ։ Քաղաքում յաճախ լուրեր են պտտում, որ զինւորները մտադիր են բանտի վրայ յարձակւել և ազատել քաղաքական յանցաւորներին։ Բացի տնտեսական պահանջներից նրանք ներկայացրել են և քաղաքական պահանջներ։ Զինւորները վճռականապէս յայտարարել են, որ այլ ևս չեն հնազանդւելու իրենց օֆիցէրներին, որոնք հրամայում են կոտորել գիւղացիներին։

«Էլ չենք կոտորի մեր եղբայր գիւղացիներին,—ասում են զինւորները,—որոնք կռւում են հողի և ազատութեան համար»։ «Рѣчь»

◆ Բէլօստօկից գրում են Պետերբուրգ, որ Գրօդնօի նահանգապետը իրեն ներկայացած հրէական պատգամաւորութեանն ասել է. «Հոկտեմբերին ձեզանից սպանւեց միայն 20—30 մարդ,—դուք հանգստացաք կէս տարով։ Հիմա աւելի մեծ չափով կը կոտորւէք, և այն ժամանակ կը հանգստանաք ամբողջ տարով։ Իսկ հանգստութիւնը ձեզ ձեռնտու է։ Էլ ինչի էք վախենում կոտորածից»։

Այս «ճառից» վախեցած հրէաները սկսեցին փախչել Բէլօստօկից... Եւ երկու օրից յետոյ տեղի ունեցաւ սոսկալի ջարդը։ «Р. С.»

Մ Ա Մ Ո Ւ Լ

Յեղափոխականի վրիժառու ռումբը վերջ տւեց Պլեվէի եղեռնագործ գոյութեանը, բայց Ռուսաստանի այդ հրէշական դահիճը իր սատկելուց առաջ կարողացաւ փաթաթել ամբողջ երկրի վզովը մի այնպիսի թունաւոր օձ, որը մինչև այժմ էլ շարունակում է իր մահաբեր խայթումները։

Այլանդական միապետութեան divide et impera սկզբունքը, որը մինչև Պլեվէի դաւաճան գործունէութիւնն արտայայտւում էր համարեա բացառապէս բերանացի և տպագրական խօսքի միջոցով, այդ ճիւաղի օրում մարմնացաւ մի սոսկալի արհաւիրքի մէջ, որի անունն է «պօգրօմ»։ Քիշինևն էր, որտեղ առաջին անգամը գործադրւեց արիւնռուշտ մինիստրի պետական սիստէմը։

Եւ զարմանալի չէ դրանից յետոյ, որ աւելի փոքր գազաններն էլ ընդօրինակեցին այդ մեծ գազանի սիստէմը, մանաւանդ որ այդ կերպ վարւելու բացարձակ ակնարկ կար Պետերբուրգից, որին հետևելը այնքան բարիքներ էր խոստանում Պլեվէի սիստէմը աջողութեամբ գործադրողներին. բարձր պաշտօն, փայլուն շքանշաններ, մի խօսքով՝ բիւրօկրատիական փառքի բոլոր աստիճանները...

Այսպիսով, Պլեվէի սնուցած օձը մեր երկրի վզովն էլ փաթաթւեց, և ահա տարի ու կէս է, ինչ մենք խեղդւում ենք նրա օղակների սարսափելի սղմումից։

Պօգրօմները սիստէմ, օրէնք են դարձել և կը վերջանան, ինչպէս և բռնակալական բոլոր մշտական ու «ժամանակաւոր» օրէնքները միայն այն ժամանակ, երբ վերջնականապէս խորտակւած կը լինի ինքը բռնակալութիւնը։

Հայ-թուրքական սոսկումների վերսկսումը, Բէլօստօկի անհելի կոտորածը պարզ ապացոյցներ են, որ ոչ միապետութեան «շնորհած» գեղծ սահմանադրութիւնից, ոչ այդ սահմանադրութեան այլանդակ վիժւածքից, այն է՝ պարլամէնտի ծաղրանկար Դումայից, ոչ կառավարութեան խոստումներից, նրա «խաղաղացնող» արշաւախմբերից, նահանգապետներից, գեներալներից, գեներալ-նահանգապետներից—ոչ մի փրկութիւն չը կայ...

Զօրքերը,—ասում է «Н. Жизнь» Բէլօստօկի սարսափների առթիւ,—դարձեալ անզօր են հանդիսանում ճնշելու պօգրօմը, և այդ պարզապէս ապացուցւում է, որ պօգրօմում մասնակցում են կառավարական իշխանութիւնները, թէ չէ, իհարկէ, դժւար չէր լինի ճնշել այդ պօգրօմը զինւած ույժի միջոցով։

Մի թէ նոյնը չէ և մեզանում. երբ հարկաւոր է լինում ճնշել մի որև է ապստամբութիւն, կոտորել «խառնակիչներին», զօրքերն էլ են կարող հանդիսանում, ղեկավարողներն էլ են «իրենց կոչման բարձրութեան վրայ» լինում. դժբախտ Գուրիան ձեզ օրինակ։

Իսկ երբ հարկաւոր է լինում պաշտպանել ժողովուրդը վայրագ հրոսակներից, խուլիգանական խմբերից, օ, դա այնքան մի դժւար խնդիր է, որ կառավարութիւնը միանգամայն անզօր է մի բան անելու։

Ծիծաղելի է, ճշմարիտ, այլ պատասխան, այլ վերաբերմունք սպասելու կառավարութիւնից, քանի որ անթիւ փաստեր ցոյց են տւել, որ հէնց նա ինքն է բոլոր սոսկումներին թև ու թիկունք տւողը. ինչպէս կարող է, ուրեմն, նա ձեռք բարձրացնել իր դաշնակիցների դէմ.

Կասկած չը կայ,—շարունակում է թերթը,—որ այդ բոլոր պօգրօմները ինքնակալ-բիւրօկրատական կազմի, իսկապէս, վերջին գալարումներն են և նշանակում են նրա մօտալուտ վախճանը։ Կառավարութիւնը կարող է յենւել միայն անզուսպ, գազանացած և իր միջոցով արհեստականապէս սանձարձակ դարձրած աւերիչների վրայ. այդպիսի կառավարութիւնը չէր կարող երկար շարունակել իր գոյութիւնը նոյն իսկ միջին դարերում. իսկ այժմ ևս առաւել։ Ճիշտ է մինչև այժմ կառավարութիւնը յենւում էր նոյնպէս և օտար բանկիրների վրայ, բայց այդ նեցուկը, երևի, շուտով կը քանդւի. իզուր չէ, որ Բէլօստօկի պօգրօմը անմիջապէս առաջացրեց ռուսական արժէթղթերի անկումը. իզուր չէ, որ Պարիզից մեր կառավարութեան համար յուզիչ լուրեր են գալիս, թէ այնտեղի բանկիրները չեն ուզում վերջին փոխառութեան երկրորդ մասը տալ։

Բայց յոյս դնել միայն բանկիրների վրայ՝ չէ կարելի։ Թող Գօրէմիկինի և ընկ. այդ նոր գազանութիւնը միացնի հասարակութիւնը նոր կռւի համար. թող մեր Դուման էլ ժողովի իր բոլոր ուժերը և յայտարարէ կառավարութեանը վճռական պատերազմ։

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՔՐՕՆԻԿ

Հացթուխ բանւորների գործադուլը Թիֆլիսում արդէն վերջացաւ. Կալանաւորւած 400 բանւորներից 3-ին միայն պահել են բանտում, միացածներն արձակւած են։ Բանւորները գրեթէ բոլորը դաշնակցականներ են։ Տրամադրութիւնը միանգամայն անյողդողդ է։

Եղէկ արդէն համաձայնութիւն կայացրին. բանւորների բոլոր պահանջները կատարւած են։ Այսօր քաղաքային դումայի դահլիճում այդ հացթուխների միտինգն է նշանակւած։

—

Ծխախոտագործարանների գործադուլը։

Արդէն երկու շաբաթից աւելի է, ինչ Թիֆլիսի ծխախոտագործարաններում գործադուլ է յայտարարւած։ Բանւորները համարեա միահամուռ ույժերով պաշտպանում են իրենց պահանջները և ինչպէս երևում է շատ երկար կը շարունակւէ գործադուլը, եթէ ֆաբրիկանտները յամառեն և բաւարարութիւն չը տան։ Ֆաբրիկանտների դրութիւնը նախանձելի չէ. մագազիններից և խանութներից բողոքներ են լսւում ֆաբրիկանտների հասցէին, որ նրանք իրենց յամառութեամբ տուժել են տալիս վաճառականներին։

Զգացւում է ծխախոտի պակասութիւն, մանաւանդ մի քանի տեսակների։ Շատերը խոշոր քանակութեամբ ծխախոտի պաշար են գնում. ինչպէս երևում է գործադուլը երկար է տևելու։

—

Կախէթիայից մեզ հաղորդում են, որ «ուդելի» (կայսերական ընտանիքին պատկանող) խոշոր այգիներում՝ Ծինանդալ, Նափարեուլ... աշխատողները թւով 700-800 յայտարարել են գործադուլ։ Նրանք պահանջում են աշխատանքի ժամերի կրճատում (մինչև 12 ժամ), վարձատրութեան աւելացում 10-ից 25%, Աշխատում են միայն կարկտի դէմ հաստատւած մօրտիրների բանւորները, ինչպէս և այգիների պահապանները, գողութեան ու աւազակութեան առաջն առնելու համար։ «Աղա կառավարիչները» ստիպւած են իրենք խոտը հնձել ձիերը սովամահ չենթարկելու համար։ Իրենք են փոխարինում սայլապաններին մէկ կալւածից միւսը գնալու համար։

—

Վարշաւայի երկաթուղու դէպօի բանւորները վերջնականապէս հրաժարւել են երեկոները (ժ. 6-9-ը) աշխատելուց. Նրանք պահանջում են որպէս զի այդ աշխատանքները յանձնւեն իրենց գործադուլ ընկերներին։ (XX. В.)

—

Պետերբուրգում հիմնել են մի շարք նոր համարհեստակցական միութիւններ՝ կառապաններից, դռնապաններից, հացթուխներից, կօնդիտէրներից և այլ բանւորներից. յետոյ միացել են և տպագրական մամուլի տէրերը, թւով 140 վերջիններս, տէրերի սանելով կազմակերպւում են ոչ թէ գրաշարների պահանջներին դիմադրելու, այլ միմիայն իրենց պրօֆէսիօնալ շահերի պաշտպանելու համար... (Н. Ж.)

—

Մօսկւայի նահանգի գիւղերում նոյն իսկ ամենախուլ անկիւններում գումարւում են ժողովներ, ուր խօսւում է օրւայ հրատապ հարցերի մասին, Պետական Դումայի, հողի։ Խոշոր տեղերում կայացւում են որոշումներ պահանջել հող և ազատութիւն։ (Т. Р.)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռագիրը լուր բերեց, որ Շվէյցարիայի կենտրօնական կառավարութիւնը (Դաշնակցական Խորհուրդը) որոշել է առաջիկայ սեպտեմբերին նոր դիպլօմատիական համաժողով գումարել Բեռնում—այլ և այլ պետութիւնների պատգամաւորներից—զբաղւելու համար բանւորների պաշտօնութեան խնդրով։ Կօնգրէսը կը բացի Շվէյցարիայի նախագահ Ֆօրեր և կաշխատի մշակել միջազգային մի դաշնադրութիւն՝ արգելելու համար ամեն տեղ կանանց գիշերային աշխատանքը ինդուստրիայի մէջ։

Քանի որ այդ ծանրակշիռ սօցիալական հարցի նախաձեռնութիւնը ստանձնում են իշխող, իրաւատէր դասակարգերի ներկայացուցիչները՝ կարելի է նախօրօք գուշակել, որ դիպլօմատիական այդ կօնգրէսը առանձին դրական հետևանք չը պիտի տայ։ Առաջին դիպլօմատական կօնգրէսը կայացաւ 1890-ին, Բեռլինում, և իհարկէ մեծ արդիւնք չունեցաւ. Վիլհէլմ II-ն էր այդ կօնգրէսի նախագահողը...

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 յունիսի

Ս. Աստւածածին եկեղեցու Թամամշեան ուսումնարանի ուսուցչական խումբը կարդալով «Ալիքի» № 31-ում. Զգրաշէնի ուսուցչական կազմի յայտարարութիւնը իրենց հաքարաձնութեան անունով, յայտնում է իր համակրութիւնը և շնորհաւորում է իր պաշտօնակից ընկերների անդրանիկ գործնական քայլը։

Հաստատ համոզւած լինելով, որ նոյն և աւելի պակաս պայմաններում են գտնւում մեր ուսումնարաններից շատ-շատերը, չենք կասկածում թէ մեր պաշտօնակից միւս ընկերներն ևս արձագանք չեն տալ իրենց ընկերների արդար բողոքի ձայնին, գործնական մասնակցութիւն ցոյց տալով և միանգամայն դնելով կարուկ կերպով հրապարակի վրայ այս հասունացած և անյետաձգելի հարցը։

Աչքի առաջ ունենալով հարցի լրջութիւնը և մեզ՝ ուսուցիչներիս համար անսպասման կենսական նշանակութիւն ունենալը, Թամամշեան ուսումնարանի դպրոցական կազմը միացնում է իր բողոքի ձայնը Զգրաշէնի ուսուցչական կազմի ձայնին, գրելով որ դա ամբողջ հայ ուսուցչութեան բողոքի առաջին գործնական հրաւէրն է։

Թող վստահ լինեն մեր ընկերները, որ գործնականապէս ևս մասնակից կը լինի նրանց եթէ միայն այդ՝ ընդհանուրիս վերաբերեալ կենսական հարցը, բաւարար լուծում չի ստանայ։

Չենք կարող չարտայայտել և մեր զարմանքը Զգրաշէնի հոգաբարձութեան վարմունքի վերաբերմամբ, որը «Ալիքի» նոյն համարում նախկին բողոքող ուսուցչական խմբի տեղ նորին է հրաւիրում։

Մենք չենք կասկածում թէ մեր բոլոր ընկերները արհամարհանքով կը վերաբերւեն այդ հրաւէրին, որը մի դաւն ծաղր է ուղղւած ուսուցչական պահանջների դէմ։ Մենք չենք էլ հաւատում, թէ կարող է գտնւել մէկը, որը դաւաճանէր իր դասակարգային շահերին, սակայն ցաւելով պէտք է ասել, որ մեզանից մի քանիսն արդէն խնդիր են ներկայացրել այդ հոգաբարձութեանը և ահա այդպիսիններին ենք ուղղում մեր բուռն զայրոյթը և հակակրանքը։

Տեսուչ՝ Միք. Մուշյեան, օր. Ն. Տէր-Աւագեան, օր. Ա. Սաղաթելեան, օր. Ա. Տէր-Դաւթեան, Լ. Ղորղանեանց, Դ. Դեբենիկեանց, Յ. Մայիլեան։

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Պետերբուրգի գործակալութիւնից)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունիսի 8։ Նիստը բացւեց 11 ժամ 40 րոպէին։ Նախագահում է Ս. Ա. Մուրոմցեւը։ Հերթական է քաղաքական հաւասարութեան օրինագծի քննութիւնը։ Ջերմ ճառեր արտասանեցին Կրիլովը և Զաբօլօտնին։ Նրանք գլխաւորապէս խօսում էին կանանց և հրէաների իրաւունքների մասին։ Մի քանի հռէտոր հրաժարւում են խօսքից։

Յետոյ խօսում է Ալադինը, որպէս պաշտպան կանանց, որոնք կը կարողանան ձեռք բերել իրենց համար իրաւունքներ։ Աւելի լաւ է տալ իրաւունքներ, քան սպասել մինչև որ նրանք խլեն տղամարդկանց ձեռքերից։ Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել մահմեդական կանանց վրայ և հոգս տանել, որպէսզի մասնաժողովում մահմեդականները աւելի լաւ ներկայացւեն, քան Դումայում, որտեղ նրանք շատ քիչ են։ Գրութեան թերութիւններին է վերագրում հռէտորը այն հանգամանքը, որ չեն յիշւում պաշտօնական անձերի արտօնութիւնները և դասերը (сословіе) թողնելը։ Քանի որ Ռուսաստանում կայ երկու յարգելի դաս՝ ժառանգական պատւաւոր գիւղացիութիւն և քաղաքային բանւորներ, թող ազնւականները հրաժարւեն իրենց իրաւունքներից (ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում)։

Կոմս Գէյդէն յայտնում է, որ ազնւականներին մնացել է շատ քիչ իրաւունքներ, լոկ չընչին բաներ, չարժէր դրանց հրաժարւել Հաէ-

---

Ով որ տարբեր դատողութիւն ունի, բուրժուա է։ Բուրժուա է դուրս գալիս այդ տրամաբանութեամբ և ինքը «Դաշնակցութեան» հանդուցեալ վետերան—Քրիստափորը, որին, սակայն մեր հեղինակը խունկ է ծխում, իբրև աշխատաւոր դասի իդէօլօգի, իբրև ճշմարիտ սօցիալիստի... Եկէք ու պարզեցէք հակասութիւնների այս շփոթը։

Քրիստափորին խանդավառ ներբողներ է կարդում պ. Մռաւեան, բայց մեծ պրօպագանդիստը գերեզմանի մէջ այնքան էլ լաւ չէ զգում իրեն այդ ներբողներից... Քրիստափորները հանդիսանում են պ. Մռաւեանի տեսութեան մէջ ամենաաններխանձելի դերում. Նրանք ինչ որ ստօմատներ են բուրժուազիային հլու հպատակ. Նրանք «իրենց ծոցում տեղ են տւել թունաւոր օձին» (բուրժուազիային) և նրա հետ միասին, նրա հրամանատարութեան տակ կազմել են այն «տիպիքական բիւրօկրատիայի» շարքերը, որը «առանց որև է անձնազոհութեան ու արիութեան՝ իրաւունք է համարում իրեն՝ ակտիւ մասնակցութիւն ունենալ յեղափոխական շարժման տակտիկան որոշելու մէջ» Տաճկահայաստանում։ Քրիստափորները մաս են կազմում այն «կուշտ ու անհոգ», «սատրապական» բիւրօկրատիայի, որ չէր ապրում երկրի «ցաւերով», որը Կովկասից վարել էր ուզում տաճկահայի շարժումը, «ինչպէս ռուսական բիւրօկրատիան Պետերբուրգից կառավարում էր Մանջուրական բանակը» (եր. 26)։ Դա մի «մեծ ոճիր էր» ասում է պ. Մռաւեան. և այս մեծ ոճրին տրամաբանօրէն մասնակից էին յայտնւում Քրիստափորները։

Վերջապէս Քրիստափորին իրենց համախոհ, գաղափարակից են հռչակում այն մարդիկ, որոնք մի անսովոր թեթևամտութեամբ բացականչում են. «Ինչ շահ կովկասահայ ժողովրդին՝ Տաճկահայաստանի ազատագրումից»... Դա ամենածանր՝ վիրաւորանքն է Քրիստափորի յիշատակին, նրան, որ սօցիալիզմը դաւանում էր փոքր ինչ տարբեր ձևով, քան մեր թոթովախօս առաքեալները, նրան, որ եռում էր մի սուրբ գաղափարական ոգևորութեամբ, տաճկահայերի ազատագրութիւնը երազելով, և որը այդ լքւած, արիւնաշաղաղ դատի շուրջը ձգտում էր համախմբել հայութեան բոլոր կորովի ու անվհատ տարրերը, առանց խտրութեան դասակարգերի ու դաւանանքի։

Այդպէս էր Քրիստափորը, ուրիշ կերպ չէր նա։

Անհասարակ զարմանալի լաւ ծանօթութիւն է ցոյց տալիս պ. Մռաւեանը մեր յեղափոխական դէպքերի և շարժման նկատմամբ։ Նա մեծ ապլօմբով խօսում է Կովկասեան դաշնակցական բիւրօկրատիայի մասին, որը հրամաններ էր արձակում անհագին տարածութեան վրայ. մինչդեռ մեր շարժման ընթացքին տեղեակ ամեն մէկը գիտէ, որ յեղափոխական ձեռնարկները առհասարակ ծրագրել ու իրագործել են տեղական մարմինների ձեռքով, նրանց ազատ ու աւտօնօմ կամքով, յաճախ ընկերական խորհրդակցութեամբ, բայց երբէք բիւրօկրատական հրամաններով։ Այդ հրամանները, վստահանում եմ կարծել, միայն պ. Մռաւեանի հիւանդոտ երևակայութեան մէջ են։

Տգիտութեան հետ նկատելի է մեր քննադատի մէջ և անբարեխղճութեան շօշափելի դօզա։ Դաշնակցութիւնը, բնաւ յաւակնութիւն չունի ներկայանալու,—մանաւանդ իր այժմեան անցողական շրջանի մէջ—իբրև գաղափարական կուսակցութեան մի կատարելատիպ, ուր անձնուրացութիւնը, դիսցիպլինը, մտքերի ու դաւանանքների համաժողովութիւնը կազմեն անխախտ կանոն, սիստէմ։ (Որտեղ ցոյց կը տաք այդպիսի մի կազմակերպութիւն)։ Սակայն քննադատելիս չը պէտք է կորցնել չափի գաղափարը։ Դաշնակցութեան վարչական մարմինները Գօրէմօնօսցեվեան բիւրօկրատիայի հետ համեմատելուց յետոյ՝ պ. Մռաւեան պահանջ է զգում նոյն իսկ աղճատելու Դաշնակցութեան credo-ն, նրա ծրագրային էութիւնը։ Նա պնդում է, որ այդ կազմակերպութիւնը թիւրիմացութեամբ է իրեն անւանում յեղափոխական, որ նա «չէ պատճառաբանում իր երևան գալը տիրող յետամնաց կարգերի գոյութեամբ ու նրանց տապալելու ձգտումով,» և այլն և այլն. ձրի մեղադրանքներ, որոնց անհիմն ու անբարեխիղճ լինելը պարզ կը ցոլայ ամեն մէկին, որ նեղութիւն կը կրէ թերթել «Դաշնակցութեան Կովկասեան Գործունէութեան Նախագիծը»։

Աւելին է ասում պ. Մռաւեանը. Նա ընդունում է այնուամենայնիւ, որ Դաշնակցութիւնը որոշ չափով մասնակցում է ընդհանուր ազատագրական շարժման մէջ, որոշ չափով պայքար է մղում ընդդէմ տիրող դասակարգերի որոշ չափով մասնակցում է գործադուլների մէջ, բայց Դաշնակցութիւնը անում է այդ բոլորը ոչ թէ համոզմունքով, այլ անում է, «որպէսզի աշխատաւոր մասսաները ձեռքից բաց չը թողնէ» (եր. 41)։

Չարժէ պատասխանել այդպիսի երեխայամիտ ամբաստանութիւններին, որոնք այլ և այլ վարիացիաներով կրկնւում են շարունակ կովկասեան սօցիալ-դեմօկրատների թերթերում։ Ինչ անենք, որ Դաշնակցութիւնը այն տիտանեան ուժը չէ, որ կարողանայ գոհացում տալ Մռաւեանների աշխարհասասան տեմպերամենտին, որը ընդունակ լինի միաժամանակ ու բոլոր թափով ասպարէզ գալ և՛ ընդհանուր ազատագրական կռիւներում, և՛ տնտեսական պայքարի մէջ, և՛ հայ-թուրքական մենամարտում. Նա կարողանում է միայն որոշ չափով արձագանք տալ այդ բոլոր այլազան պահանջներին, և գոհ կը լինէր, որ ուրիշ, իրենց աւելի գաղափարական անւանող կուսակցութիւնները ևս բաժանէին այդ բոլոր չարատանջ հոգսերը, կամ գէթ հանգիստ ձգէին Դաշնակցութիւնը։ Այդ սիստէմատիկ մեղադրանքները Դաշնակցութեան դէմ դառնում են արդէն անձաշակ. ինչպէս ժողովուրդն է ասում, «համը տանում են»։ Առաւել ևս՝ երբ քննադատները գիտնական-սօցիօլօգի ծիրանի են հագնում և հայոց կեանքի երևոյթներին փորձում են պատւաստել իրենց անգիր արած «թէօրիաները»։

Գ. Մռաւեանի գրքոյկը այդ տեսակի մարզանքներից է. Նա հիւսւած է, սկզբից մինչև վերջ, անմտած, չը մարսւած պարբերութիւններից, տարտամ մտքերից, կիսամտքերից (недомысліе)։

Կարդացէք, օրինակ, Մռաւեանական փիլիսոփայութեան այս բնորոշ կտորը. «Մարդիկ սովորաբար մտածում են այնպէս, ինչպէս թելադրում են նրանց սեփական շահերը։ Հասարակական իդէալները բղխում են դասակարգային շահերի ճիշտ ըմբռնողութիւնից (հետաքրքիր է, ինչ դասակարգային շահերի ճիշտ ըմբռնողութիւնից է առաջացել 70-ական թւականների վերջերում, տաճկահայ մտաւորականութեան իդէալը ազատ Հայաստանի մասին, կամ ինչ դասակարգային շահեր են ծնունդ տւել Յունաստանի, Սերբիայի, Բուլգարեայի և այլ սարուկ հայրենիքների ազատագրական իդէալներին)։ Չը կայ աբսօլիւտ արդարութիւն մարդկանց համար և ամեն մի դասակարգ արդարութիւնը չափում է իր սեփական դասակարգային արշինով... և այլն և այլն։ Ֆրազներ, տարտամ, անորոշ, առաձգական։ Հեղինակը վերցրել է նրանց մարքսիստական բրօշիւրներից, բայց չէ մարսել։ Շատ հեռու կը տանէր՝ եթէ նոյն իսկ հարևանցօրէն քննէինք պ. Մռաւեանի «փիլիսոփայական» գրութիւնները, գրւած 53 երեսների վրայ։ Առանց այն էլ երկար ծանրացանք. պատճառն այն չէ, ի հարկէ, որ գրքոյկանի այդ համեստ շարադրութիւնը արժանի է առանձին ուշադրութեան, այլ այն, որ նոյն մտքերն ու փիլիսոփայութիւնները մենք շարունակ լսում ենք «Դաշնակցութեան» հակառակորդների բանակից։

Անվերջ խարազանումներ, անդուլ, մոլեգնոտ արշաւանք մի կատարեալ травля Դաշնակցութեան դէմ այս զարհուրելի, տագնապոտ օրերում բոլոր կողմերից,—նոյն իսկ այն մարդկանց կողմից, որոնք խոստովանում են, որ այդ կազմակերպութեան շուրջը այսօր խմբւած են հայ ժողովրդի ամենահերօսական, ամենավեհ և ամենասքանչելի հոգիները*)։ Սա մի ողբալի մթնոլորտ է, ոչ առողջ քննադատութեան, այլ հիւանդոտ քննադախտի մի համաճարակ... Դաշնակցութիւնը ի դերև կը հանէ իր դէմ ուղղւած բոլոր անարդար յարձակումները և շարքերը սեղմելով ու ստւարացնելով, կը շարունակէ իր պայքարը հայ ժողովրդի թշնամիների դէմ։

Մ. Վարանդեան

*) տես «Ժամ. է սթափւելու», եր. 30.

տօրը հերքում է Վինաւէրի և Պետրունկևիչի բոլոր խիստ նկատողութիւնները և յայտնում է, որ կատարելապէս միանում է գրութեան, բայց առարկում է միայն առաջարկած օրէնքների շուտափութութեան դէմ, որովհետև չի կարելի այդպէս արագ վերակազմել Ռուսաստանի ամբողջ օրէնսդրութիւնը։

Լեվին, առարկելով իշխ. Վօլկօնսկուն հրէական հարցի վերաբերմամբ, յայտնում է, որ այդ հարցը ամեն տեղ լուծուած է բացի Ռումինիայից։ Ռուսաստանի համար աւելի լաւ է Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի շարքում լինել, և ոչ Ռումինիայի։ Ռուս ժողովուրդը, ազատելով հրէաներին, ազատութիւն կը տայ ոչ թէ մի ստրուկի, որովհետև այն ստրուկը, որ գիտակցում է իր ստրկութիւնը, արդէն ազատ մարդ է։ Հռէտօրը մատնանիշ է անում օրէնքների միջի աղաղակող հակասութիւնները։ Ինքը, Լեվինը, ոչպէս հրէա, ապրում է Պետերբուրգում Բարձրագոյն հրամանով օրէնսդրութիւնների մէջ մասնակցելու համար, բայց սեսսիայից (նստաշրջանից) յետոյ իսկոյն և եթ պարտաւոր է հեռանալ։

Ռիժկով ապացուցանում է, որ հրէական ջարդերը հետևանք են հրէաների անհաւասարութեան. Ջարդերից վնասւում են ոչ միայն հրէաները, այլ և քրիստոնեաները։

Սիրտլանով և Ախտէեանով մանրամասնօրէն բացատրում են այն բոլոր սահմանափակումները, որ սահմանուած են օրէնքով կայսրութեան մահմեդական ազգաբնակութեան համար և յայտնում են, որ հաւասարութիւն պէտք է լինի ոչ միայն տղամարդկանց համար, այլ և մահմեդական կանանց համար, որովհետև գոյութիւն ունեցող սահմանափակումները հիմնուած են աւելի շուտ սովորութեան վրայ, քան կրօնի։

Շչեօպկինը հակառակ է խոհեմութիւնն ի չարը գործ դնելուն և կողմնակից է հաւասարութիւնն անմիջապէս իրականացնելուն, որի բացակայութիւնը մղում է երկիրը ոչ միայն դէպի յեղափոխութեան ճանապարհը, այլ և դէպի պետականութեան սկզբունքի բացասումն և անիշխանականութիւն։

Կօկօշկինը բանաձևելով վիճաբանութիւնները, բաժանում է նրանց երկու տեսակ առարկութիւնների՝ ըստ էութեան և ըստ ձևի։ Իրաւունքների սահմանափակումների և արտօնութիւնների վերացումը ոչնչացնում են դասերի բէալ նշանակութիւնը։ 33 թիւը բաւական է, որ մասնաժողովի մէջ մտնեն իրաւաբաններ և տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ։ Սահմանելով հաւասարութեան անխախտ սկզբունքը, մենք պէտք է նրանից տրամաբանական եզրակացութիւններ հանենք, մէկը միւսի յետևից. չի կարելի գնալ յաջորդական մասնակի բարեփոխութիւնների ճանապարհով. հարկաւոր է ձգտել քաղաքացիական հաւասարութեան մի ամբողջական օրգանական ինստիտուտի։

Նախագահը քւէարկում է Գէյդէնի ուղղումը, որպէսզի մասնաժողովին ոչ միայն իրաւունք տրւի ներկայացնելու առանձին-առանձին օրինագծեր, այլ պարտաւորեցնել նրան՝ երբ պատրաստւեն առանձին օրինագծերի հիմնական կէտերը՝ ներկայացնել Դումային մշակելու համար առանձին ընտրուած մասնաժողովներում։ Ուղղումը առաջացնում է տաք վիճաբանութիւններ, որոնց մասնակցում են Օստրօգօրսկի, Նաբօկօվ, Վինաւէր և Գէյդէն։ Ուղղումի դէմ են ձայն տալիս ամբողջ կենտրոնը և աջակողմը։ Նոյնպիսի ճնշող մեծամասնութեամբ մերժւում են Մասսօնիուսի, Պետրաժիցկու ուղղումները։ Ընդունւում է 151-ի առաջարկութիւնը, որի դէմ ձայն է տալիս միայն աջակողմի մի մասը։ 12 ժամ 25 րոպէին յայտարարւեց ընդմիջում։

Նիստը վերսկսւեց 4 ժամ 5 րոպէին։ Ընտրւեց խմբագրական յանձնաժողով։ Գրադարանային յանձնաժողովի ընտրութիւնները յետաձգւեցին մինչև յունիսի 9։ Պետրաժիցկու առաջարկութեամբ, որ պաշտպանում է նաև Նաբօկօվը, Օստրօգօրսկին կարդում է 190-ի մասնաժողովի զեկուցումը, որ Պետական Դուման համակրութեամբ է վերաբերւել միջազգային միջնորդ դատարանի միջպարլամենտական մասնաժողովին մասնակցելու հրաւէրը ընդունելու հարցի մասին (ծափահարութիւններ)։ Նախագահը բացատրում է, որ արդարադատութեան և ներքին գործերի մինիստրները կամենում են բացատրութիւն տալ։ Արդարադատութեան մինիստրը խօսում է Վարշաւայում Դալինսկուն և Մալեարսկուն զինուորական դատարանին յանձնելու վերաբերմամբ։ Մինիստրը այս բանում ապօրինութիւն չէ գտնում։

Ներքին գործերի մինիստրը բացատրութիւններ է տալիս Անտօն Շչերբակի գործի առիթով։ Մինիստրը ընդունում է, որ մի քանի դէպքերում ժանդարմական իշխանութիւնները խառնւել են քաղաքականութեան մէջ։ Մինիստրը դրա համար նրանց սաստելու է։ Իսկ ինչ վերաբերում է Վօլօգդայի և Կալեազինի անկարգութիւններին, նրանք առաջացել են ցոյցարարների պատճառով։ Իսկ Ցարիցինում յունիսի 1-ին իսկապէս մեղաւոր է եղել ոստիկանութիւնը. այնտեղ քննութիւն է կատարւում։ Վերջում մինիստրը ասում է. ոստիկանութեան պաշտօնեաները անձնազոհութեամբ կատարում են իրենց պարտքը (դահլիճում ծիծաղ, աղաղակներ՝ «բաւական է»), անկարգութիւնների ժամանակ նրանցից սպանւել են 288 և վիրաւորւել են 383 (աղաղակներ՝ «քիչ է»)։ Նախագահը զանգահարում է և ասում. «խօսքի ազատութիւնը այս դահլիճում պատկանում է ամենին»։ Մինիստրը շարունակում է. պահպանում են կարգը և պէտք է պահանջել պարտքի խելացի և հաստատուն կատարում։

Մինիստրին առաջին պատասխանողը լինում է իշխ. Ուրուսովը։ «Ես հաւատում եմ ներքին գործերի պ. մինիստրի բացատրութեան անկեղծութեանը, հաւատում եմ, որ մինիստր Ստոլիպինի օրով ոչ ոք չի յանդգնի նման գործունէութեան, բայց անբնական է, որ այս կամ այն մինիստրի հայեացքներից կախուած լինի պաշտօնատար անձերի գործունէութեան ուղղութիւնը։ Մանրամասնօրէն կանգ առնելով ջարդերի սովորական շրջապատի վրայ, հռէտօրը նկատում է, որ միշտ զգացւում է լայն կերպով մտածուած մի կազմակերպութիւն, բայց քիչ է կազմակերպութիւնը կառավարչական անւանել. ղեկավարող ձեռներցութիւնը պատկանում է անյայտ մարդկանց, որոնք կանգնած են ինչոր անհասանելի պատի յետև, և որոնք իրենց կոպիտ հասկացողութեամբ աշխատում են լուծել պետական հարցերը և քաղաքական կատարեալ տգիտութեամբ վիվիսեկցիա են կատարում (օպերացիա, որ գիտնական նպատակով անասունի վրայ են անում) կենդանի մարդկանց վրայ։ Այդ նախաձեռնողները գտնւում են ներքին գործերի մինիստրութեան ազդեցութիւնից դուրս. այդ կիսակառավարչական գործերը դադարեցնելու ոչ մի գրաւական չի կարող տալ ոչ միայն այժմեան կառավարութիւնը, այլ և Դումայի մեծամասնութեան մինիստրութիւնը։ Իբրև ապացոյց իշխ. Ուրուսովը բերում է բազմաթիւ փաստեր և եզրափակելով ասում է, որ Դուման զգուշութեամբ աշխատում է բարձրացնել ցարի թագը և պատսպարել միապետին կուսակցական և դասակարգային կռւից ու պատասխանատւութիւնից։ Դուման ձգտում է բացառապէս դէպի պետական բարիքը (ծափահարութիւններ)։ Բայց մեզ վրայ էլ ուղղւում են նոյն անբերևոյթ ոյժերը։ Այդ մեծ վտանգը չի անյայտանայ, մինչև որ կառավարչական գործերի վրայ ազդեցութիւն կունենան այն մարդիկ, որոնք իրենց դաստիարակութեամբ վախմիստրներ են, ոստիկաններ են, համոզմունքով՝ ջարդի կողմնակիցներ կամ պօգրոմշչիկներ (միասիրտ բուռն ծափահարութիւններ, երկու, երեք ձայներ ծայրայեղ ձախակողմից՝ «պօգրոմշչիկներ», «հրաժարական», նախագահի զանգ)։

Վինավէրն ասում է, որ իշխանութիւնը պէտք է ուժեղ և հաստատուն լինի, բայց չը պէտք է օգտւի այն միջոցներից, որ նա գործածում է։ Նա մանրամասնօրէն քննադատում է ոստիկանական դեպարտամենտի առանձին բաժնի ղեկավար Րաչկօվսկու և Տիմօֆէևի գործունէութիւնը, որոնք օր-գիշեր գեներալ Տրէպօվից անբաժան են. Նա վերջացնում է, ասելով, որ անիշխանութիւնը մասնաւոր տեղերում աւելի քիչ վնասակար է, քան պալատական անիշխանութիւնը (ծափահարութիւններ)։

Ցետոյ խօսեցին մի քանի հռէտօրներ։ Երբ ներքին գործերի մինիստրը, ամբիօն բարձրանալով, սկսեց խօսողներին առարկել, լսւեցին աղմկալի աղաղակներ «հրաժարական տուէք», «հեռացէք»։ Չը նայած աղաղակներին մինիստրը շարունակեց խօսել և վերջացրեց ճառը, յայտնելով, որ իշխանութիւնն ընդունել է թագաւորի ձեռքից և ամբողջովին իր վրայ է վերցնում պաշտպանութեան և կարգ ու կանոնի պատասխանատւութիւնը։ Երբ մինիստրին սկսեց առարկել կովկասեան պատգամաւորը, աղաղակները դահլիճում աւելի սաստկացան, աղմուկը չէր դադարում, չը նայած նախագահի զանգահարութիւններին։ Այն ժամանակ նախագահը յայտնեց, որ քննութիւնը չի կարող շարունակել այսպիսի անկարգութեան մէջ և իր իշխանութեամբ ընդհատեց նիստը մի ժամով 6 ժամ 35 րոպէին։

Վիճաբանութիւնները մինիստրների բացատրութեան առիթով անցնում են խիստ գրգռուած դրութեան մէջ։ Նաբօկօվ մանրամասնօրէն պատմում է Վօլօգդայի ջարդի պատմութիւնը և յայտնում է, որ մինիստրի ասածները ճիշտ չեն և վերջացնում է իր ճառը այս խօսքերով. Ռուսաստանը կառավարում են ռօտմիստրները. Վօլօգդայի նահանգապետը այս բանը հասկացաւ և հրաժարական տւեց։ Նրա օրինակը արժանի է ընդօրինակութեան (բուռն ծափահարութիւններ)։

Րօդիչև խօսում է Ռուսաստանի գրուած և չը գրուած օրէնքի մասին։ Գրուած օրէնքով ջարդերը չեն թոյլատրւում, իսկ չը գրուածով օրէնքով դրանց համար վարձատրւում են։ Եթէ կառավարութիւնը կը գործի հին եղանակով, ժողովուրդը նրա քաղաքականութեան համար կը վճարէ պետական սնանկութեամբ, իսկ աւելի առաջ՝ նոյնիսկ արիւնով (բուռն օվացիա)։

Ներքին գործերի մինիստրը առարկում է Նաբօկօվին, Վինաւէրին և իշխ Ուրուսովին (ծայրայեղ ձախակողմի նստարաններում ամբողջ ժամանակ տիրում է աղմուկ՝ «չենք ուզում ձեզ լսել», «բաւական է»)։ Մինիստրը դառնում է դէպի պատգամաւորները և բարձր ձայնով յայտնում. «Ձեր աղմուկը ինձ չի խանգարի» և շարունակում է, որ Նաբօկօվի տեղեկութիւնները ճիշտ չեն. «չեմ հասկանում, թէ ինչու ռօտմիստրներին այդպիսի դեր է վերագրւում։ Մինիստր դառնալով, ես ստացայ ամբողջ իշխանութիւնը և ասում եմ, որ սրանից յետոյ անօրէնութիւն չի լինի» (աղաղակներ՝ «իսկ Բելոստոկի ջարդը»)։ Մինիստրը ամբիօնից հեռանում է սարսափելի աղմուկի տակ։ Նիստն ընդհատւում է։

Նիստը վերանորոգւեց 7 ժամ 45 րոպէին։ 133-ի մեծամասնութեամբ ընդդէմ 118-ի վճռւեց մինիստրի բացատրութեան առիթով վիճաբանութիւնները շարունակել վաղը։ Ցետոյ կարդացւեց ագրարային հարցի մասին գրութիւնը, որ առաջացրեց երկար վիճաբանութիւններ։ Մասնաժողովի յանձնելու դէմ են խօսում Պետրունկևիչ, Դօլգօրուկի, կոմս Գէյդէն, Մուխանով, Շախօվսկոյ, Ֆրէնկէլ, Օվչիննիկօվ, Դօլգօրուկօվ, Կոկօշկին, իսկ յանձնելու կողմից՝ Ալադին, Րօմանօվ, Ժիլկին։ Քւէարկելիս հակառակ է ձայն տալիս աջակողմը, կենտրոնը և աշխատաւոր խմբակի մի մասը, ընդամենը 140, յանձնելու համար՝ 78 ձայն։ Այսպիսով աշխատաւոր խմբակի նախագիծը մերժւեց առանց մասնաժողովի յանձնելու։ Վաղւան են յետաձգւում Դումայի անդամ Ուլիանօվին քաղաքից դուրս չը գալու համար ստորագրութիւն պահանջելու և մի քանի թերթերի հրատարակութիւնը դադարեցնելու մասին արւած յայտարարութիւնները։ Ընդունւում է Վինաւէրի պաշտպանած ստեփողական հարցապնդումը ներքին գործերի և զինուորական դատարանի դատապարտած երեք մարդկանց մահւան դատավճիռները դադարեցնելու մասին։ Յունիսի 9-ին նշանակւած է քաղաքական հաւասարութեան համար մասնաժողովի ընտրութիւնը։ Նիստը փակւեց 9 ժամ 12 րոպէին։ Հետևեալ նիստը՝ վաղը առաւօտեան 11 ժամին։

—

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

7 յունիսի

ՄԱՐՕԿ։ Վօլգայի վրայ գտնւող Սպասս գիւղի քահանայի մօտ յայտնւեց մի տեղական գիւղացի, դուրս կանչեց նրան պարտէզ, ցած գցեց և հինգ վէրք հասցրեց դանակով, ապա պաղարիւնութեամբ սրբեց դանակը և հեռացաւ։ Քահանան վախճանւեց։

ԿՕՆԵՎ։ Կօնեւի գաւառում կարկուտը վնասեց ցանքսերին հինգ գաւառակներում։ Վնասը՝ մօտ 5000 րուբլի։

ԲԵԼՕՍՏՕԿ։ Հրատարակւեց գեներալ-նահանգապետի պարտադիր որոշումը, որով արգելւում է երթևեկութիւնը քաղաքի սահմաններում երեկոյեան ժամի 10 և կէսից մինչև գիշերւայ ժամի երեքը։ Պաշտօնատար անձինք և բժիշկները կարող են անցաթուղթ ստանալ. իսկ որոշումը խախտողները ենթարկւում են 2000 րուբլի տուգանքի կամ երեք ամսւայ բանտարկութեան։ 1-ին քաղաքամասի դատաստանական քննիչը հրաւիրում է ջարդի ականատեսներին ցուցմունքներ տալու։ Պետական Դումայի անդամ Շչեօպկինը և Պոլստօշկինը այստեղից գնացին՝ նրանց ուղեկցում էին ազգաբնակութեան և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները։

ԼՕՆԴՕՆ։ Սիօնիստների անգլիական ֆեդէրացիան և հրէական տէրրիտօրիալ կազմակերպութիւնը դիմեցին մամուլին մի նամակով, որի մէջ, ցոյց տալով հրէական սոսկացող ջարդերը, յայտնում են, որ երեք քառորդ միլլիօն ֆունտ ստերլինգը, որ քիչ ժամանակ առաջ բաժանւեցին ռուսական հրէաներին, թէև ժամանակաւորապէս թեթևացրին ջարդերից վնասւածների կարիքը, բայց նրանց ընդհանուր դրութիւնը չը կարողացան բարելաւել։ Այսպիսի հանգամանքներում կարող է օգնել միայն այն, որ հրէաները ձեռք բերեն մի նոր հայրենիք, մի բան, որ ոչ միայն կը բարձրացնի հրէաների տնտեսական նշանակութիւնը՝ այլ և նրանց կը տայ ապաստարան յոյս։ Նամակը վերջանում է այս խնդիրն ի կատար ածելու համար օգնելու յորդորով։

8 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աշխատաւոր խմբակը դեմօնստրատիվ կերպով հրաժարւեց Դումայի ագրարային մասնաժողովի յունիսի 7-ի նիստին մասնակցելուց, որովհետև մասնաժողովի նախագահ Մուխանովին ի նկատի էր ունեցել ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը առանց նախնապէս համաձայնւելու աշխատաւորականների հետ։ Յունիսի 7-ին ժամանեցին Պետական Դումայի երեք կովկասեան անդամ՝ սօցիալ-դեմօկրատները, որոնց հանդիպեցին կայարանում բանւորների ներկայացուցիչները, որոնք ճառեր արտասանեցին։

ՄՕՍԿՒԱ։ Յունիսի 7-ին երեկոյեան Պետրօվսկո-Րազումօվսկ պարկում ընդհարում տեղի ունեցաւ միտինգի ժողոված գործադուլ անող կօշկակարների և ոստիկանութեան մէջ։ Երկու կօշկակար թեթև վիրաւորւեցին, մէկ կօշկակար սպանւեց։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Բերդային արտիլերիայի երկրորդ բատալիօնը չը միացաւ ապստամբներին։ Ծովեզերեայ մարտկոցները բռնեցին առաջին բատալիօնի մի մասը, որ քաղաքից տարւել էր հիւսիսային կողմը և փախել էր կալանաւորութիւնից։ Թնդանօթները դէպի քաղաք ուղղելու փորձը յաջողութիւն չունեցաւ։ Զինուորական իշխանութեան ձեռք առած միջոցները, նոյնպէս և այն, որ նաւատորմն ու հետևակ զօրքը հրաժարւեցին խռովարարներին միանալ՝ ստիպեցին վերջիններին թողնել ամրութիւնները և վերադառնալ իրենց զօրանոցները։ Երկրորդ բատալիօնը գիշերը շղթայեց զօրքերով։ Երբ պարզւեց նրա մասնակցութիւն չունենալը, նա արձակւեց։

ԽԱՐԿՕՎ։ Նահանգապետը զեկուցում ստացաւ, որ յարձակւում է տեղի ունեցել Լէբեդինի գաւառական վարչութեան վրայ։ Չարագործները սպանել են պահապաններին, յափշտակել են փողերը և անհետացել։

ՕՐԵՕԼ։ Շենշինայի կալւածում, Օրեօլի գաւառում, այրւած են տնտեսութեան բոլոր շինութիւնները։ Ձերբակալւած են տեղական վեց գիւղացի։

Յունիս 9

ԲԵԼՕՍՏՕԿ։ Ազգաբնակութիւնը մեծ հաւատով վերաբերւեց Պետական Դումայի կօմիսարներին։ Քրիստոնեաները սիրով տալիս են ցուցմունքներ։ Շատերը ժամերով սպասում են հերթի և ընդունելութեան։ Մի հասարակ գիւղացի դիմեց Շչեօպկինին այս խնդրով. «Յայտնեցէք Դումային, որ գիւղացիք մեղաւոր չեն հրէաների ջարդի և նրանց ստացւածքների կողոպտման գործում»։ Գեներալ-նահանգապետը համաձայնւեց ժողովրդական պաշտպանութիւն հիմնելու։

ԲԵԼՕՍՏՕԿ։ Պետական Դումայի անդամ Շչեօպկինը և Պոլստօշկինը մեկնեցին Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ. Համայնքների պալատ։ Ստիւարտը հարցնում է, ենթադրւում է արդեօք մինչև Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի մէջ աւելի բարեկամական յարաբերութիւններ հաստատելու համար միջոցներ ձեռք առնելը՝ հաղորդել ռուս կառավարութեան՝ անգլիական ժողովրդի կարծիքը Ռուսաստանի հրէական ջարդերի մասին։ Ստատս սեկրետար Գրէյ պատասխանեց, որ ռուս կառավարութեան շատ լաւ յայտնի է Եւրոպայի կարծիքը։ Ցամենայն դէպս, պաշտօնական դիպլօմատիական միջամտութիւնը այդպիսի միջադէպերի առիթով մի անսովոր և ոչ ցանկալի փակտ կը լինէր։

ՕԴԵՍՍԱ։ Զինուորական դատարանը գնդակահարութեան դատապարտեց գերմանական հպատակ Դէտտին, գիւղացի Զինկինին և քաղաքացի Լեբեդևին՝ խանութների վրայ աւազակային յարձակումներ կատարելու համար։

ԲԵԼՕՍՏՕԿ։ Ռուսաց հեռագրական գործակալութեան հաղորդագրութիւնը, թէ Ստարօսելցում ջարդի ժամանակ սպանւած են 50 մարդ՝ ճիշտ չէ։ Ստարօսելցում թալանւած է երեք խանութ, սպանւած չը կայ։

ԽԱՐԿՕՎ։ Քաղաքային Դուման միաձայն որոշեց յաւերժացնել ժողովրդական ներկայացուցչութեան հաստատւելու ակտը 32 ձայնով ընդդէմ 12-ի հիմնել ժողովրդական համալսարան։

ՎԱՐՇԱՒԱ։ Իդրիցի և Զամօստի մէջ անյայտ մարդիկ յարձակւեցին պօստի վրայ, սպանեցին նամակատարին և կառապանին, վիրաւորեցին կօզակին, յափշտակեցին 15,000 րուբլի և անհետացան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակւած պաշտօնական հաղորդագրութիւններ. 1) այն մասին, որ Շուրջբալտեան երկրի կրթական հաստատութիւններում դասաւանդութիւնը կատարելու է տեղական մայրենի լեզուներով, 2) Ռուս-ռումինական սահմանով խոտ և յարդ ներմուծելու արգելքի դադարեցման մասին, 3) գիւղացիական բանկի 50 միլլիօն րուբլու, 4 և կէս տոկոսային պարտաթղթեր բաց թողնելու մասին։

—Լրագրներում լոյս տեսած այն լուրերը, որ իբր թէ Կրօնշտադի անկարգութիւնները զսպելու համար Պետերբուրգից գնացած զօրքին տեղական բերդապահ զօրքը զէնքով է պատահել, ճշմարտութեան ոչ մի խօսք չեն պարունակում իրենց մէջ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Բժ. ՏԻԳ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7 պօդեզդ նոտար Մղեբրօվի։
Նոյնպէս պատւաստում է ծաղիկը։
(չ. ո. կ.) 19—96

Լոյս տեսաւ և վաճառւում է
մի նոր գիրք՝
ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ
բովանդակութիւն
1. Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը.
2. Գիտելիքներ սեռական կեանքի մասին.
3. Սեռական գործարաններ.
4. Սեռական կեանքի գործողութիւնները.
ա) Երաշախաութիւն.
բ) Դաշտան.
գ) Սեռական յարաբերութիւն.
դ) Ցղիութիւն.
ե) Ծննդաբերութիւն.
5. Յաւելւած.—Երեխայի խնամակալութիւնը։
Կազմեց Նշտար
Գինն է 20 կոպ.։ Գումարով գնողներին բաւարար զեղչ։ Դիմել՝ Тифлисъ, Геворку Бабурянцу. Дворцовая ул. Торг. Домъ Н. И. Бозарджіанцъ съ С-ми.
Վաճառւում են նոյնպէս.
Մայրը (Վ. Հիւգօի) և ուր. զրոյց. Թ. Գ. Բ. 7 կ.
Ժահրոտ վէրքեր (Նշտարի) . . 15 »
Ասսար Հաջօն և երեք հարց (Լև Տօլստօյ) 5 »
Հրատարակիչ՝ Գ. Բաբուրեանց
279 2—3

№ 4711
Teinture pour cheveux
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ
ՆԵՐԿ
ԸՆԿՈՅԶԻ էքստրակտից
Տալիս է մազերին, լինեն նրանք սպիտակ թէ չէկ, կարճ ժամանակում ցանկալի գոյնը, սկսած բաց չէկ գոյնից մինչև սևը, և այդ պատճառով կարելի է վերականգնել նրանց կորցրած գոյնը։ Որքան յաճախ գործածել այդ ներկը, այնքան աւելի մազերը գոյն կունենան։ № 4711 մազերի համար ներկը ընկոյզի էքստրակտից լիապէս արժանի է նախապատւութեան գոյութիւն ունեցող ներկելու բոլոր միջոցներից, որովհետև չի պարունակում ոչ մի վնասակար նիւթ։
ԳՈՅՆԵՐԸ սև, կիսամուգ կամ դարչինի գոյնի, չէկ և բաց գոյնի։
Փոքր սրւակի գինն է 1 ր. 20 կ.
Մեծ » » 2 » —
Ծախւում է բոլոր լաւագոյն վաճառանոցներում։
ՖԵՐԴ. ՄՈՒԼԳԵՆՍ
Կեօլն Հռէնոսի վրայ, բաժանմունքն Ռիգայում։
Նորին Կայսերական Մեծութեան արքունիքի մատակարար։
Մ 1 4—1

ՅՈՎՍԷՓ ՄԵԼԻՔ-ՋԱՆԵԱՆՑԻ
ԴՊՐՈՑՈՒՄ-ՊԱՆՍԻՕՆՈՒՄ
Ընդունւում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ պետական միջնակարգ դպրոցներ մտցնելու համար, նոյնպէս վերաքննութիւն ունեցողներին պատրաստելու համար. Гановская ул. № 7. 262 10—4

Բացւած է բաժանորդագրութիւն և լոյս կը տեսնի յունիսի 12-ից անընդհատ հայերէն լեզւով
ԽԱԹԱԲԱԼԱ
Երգիծաբանական-սատիրական գունաւոր պատկերազարդ երկշաբաթաթերթը
Տարեկան գինը Թիֆլիսում 2 ռուբ. կայսրութեան ուրիշ տեղեր 2 ր. 50 կոպ. և արտասահման 12 ֆր.
Խմբագրատունը գտնւում է Թիֆլիս, Վէրա Մատինեան փողոց սեփ. տուն № 4.
Հասցէն՝ Тифлисъ, редакція Юморо-сатирическаго журнала «Хатабала»
Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երէցեան
(փ.) 3—2

ՀԱՅՐԵՆԻՔ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամերիկա—տարեկան 1,50 դօլար
» վեց ամսեայ 0,75 »
Արտասահման—տարեկան 10 ֆրանկ
» վեց ամսեայ 6 »
Բաժանորդագրվիլ կանխիկ
Հասցէ՝ The Hairenik Publishing Co
Beach St., Boston, Mass.

Ա. Զ Դ
Այսու ազդարարում եմ, որ Պետերբուրգում հրատարակւող «ՍԱՓՐԻՉ» երգիծ. ամսաթերթի Թիֆլիսի գործակալութիւնը յանձնւած է ինձ. ունենք № 1 և № 2. շուտով կըստացւի № 3։ Դիմել Դվորցօվայա փող. ծխախոտի վաճառատուն Բօզարճեանի, ամեն օր, բացի կիրակիներից առաւ. 11 ժ.—մինչ 3-ը։
Գ. Բաբուրեանց
278 2—2

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
(համալսարանական)
ցանկանում է ունենալ դասեր։
Հասցէն Ելիզաւետինսկայա փողոց № 39.
275 6—5

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՆԱԴԵԺԴԱ
[illegible]
Հիմնուած է 1847 թ.
[illegible] № 108 [illegible] 370.
18—50